

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ



ԵՐԿՈՒ ԽՕՍՔ  
ԳԻՒՂԱՑՈՒՆ

613  
F-91

Բացուած է բաժանորդագրութիւն 1908 թ.

== Հ Ա Ս Կ Ե Ր ==

Մանկական պատկերազարդ ամսապրի:

Բաժանորդագրինն է տարեկան 4 ր.

Հասցէն՝ Թիֆլիս, Բէհրուժեան փողոց, № 25.

Խմբ. չրատ. ԿԱՏ. ԼԻՍԻՑԵԱՆ

613  
Բ-91

4 Կ.

20 JUL 2010

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ԳԻՒՂԱՑՈՒՆ

(6751)

1. Արտագրոցական կրթութիւն և զրոյցներ քաղաքներում և գիւղերում զիւղատնտեսութիւնից ու կոօպերացիայից:
2. Մարդկանց և անասունների վարակիչ հիւանդութիւնները:
3. Անասունների գլխաւոր վարակիչ հիւանդութիւնները:
4. Սոճի ու աղբատացումն:
5. Հողագործական և տիկնիքական ուսուցչանոց:
6. Գիւղական ինտելիգենցիա.
7. Հումանիտարիան Բտալիայում:

Ս.-ՊԵՏԵՐԱՊՈՒՐԳ

ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆ, ԼԵՇՏՈՒԿՈՎ, ՓՈՂ. 4

1908

//

Իժուար չէ հաստատել, որ վերջին ժամանակներս հասարակութիւնը աւելի վառ հետաքրքրութիւն է տածում գիւղատնտեսական գիտելիքներ տարածելու խնդրին:

Սակայն դա չի հասել դեռ ուշադրութեան այն աստիճանին, որը իրաւունք ունի սպասելու մեր գիւղացիութիւնը հասարակութիւնից:

Բայց նկատելի է, որ մեր հողագիտական տգիտութեան դէմ ուղղուած կռիւր մի նոր, աւելի գործունեայ շրջան է թեւակոխում. դա երևում է գրեթէ միաժամանակ կատարուած այն երկու կտակից, որոնցից մէկը վերաբերում է Ղազարի գիւղերից մէկում գիւղատնտեսական դպրոց բանալուն, իսկ միւսը նոր-նախիջեանի շրջակայքում նոյնպիսի հաստատութիւն հիմնելուն. նոյնն է հետևում նաև մեր ընթացիկ մամուլի մէջ լոյս տեսնող յօդաւածներից:

Գիւղացին իր ունեցած չնչին քանակութեամբ հողից կարող կրլինէր աւելի շատ օգուտ քաղել, եթէ մի փոքր ծանօթ լինէր գիւղատնտեսական գիտելիքներին:

Գիւղատնտեսական դպրոցների քանակութիւնը չնչին է մի կաթիլ ջուր ժովի մէջ. իսկ արտադպրո-



4546  
41

ցական նանապարհով հողագիտական գիտելիքները գրեթէ բոլորովին չեն տարածոււմ, եթէ հաշուի չառնենք մասնաւոր նախաձեռնութեամբ տեղի ունեցող պատահական զրոյցները, այն էլ սակաւագէպ:

Մենք կարծոււմ ենք, որ կան կազմակերպութիւններ, որոնք կարող են ահագին զարկ տալ գիւղատնտեսական արտադարոցական կրթութեան զարգացման, սակայն առ այժմ այդ ուղղութեամբ ոչինչ չի ձեռնարկուած:

Դրանք ժողովրդական համալսարաններն են:

Իժշկութիւնը, առողջապահութիւնը, վերջին ժամանակներս նաև կօօպերացիան նրանց ծրագրների բաւականին սովորական տարրն են կազմուծ մեզանում:

Դրանց պէտք է միանայ հողագիտութիւնը՝ (ազրոնոմիա) կօօպերացիայի հետ շաղկապուած, ինչպէս վաղուց տեղի է ունեցել — և այն էլ լայն չափերով — Իտալիայում և արևմտեան այլ երկրներում:

Ժողովրդական համալսարանները քաղաքներումն են հաստատոււմ, իսկ կեանքը պահանջուծ է, որ դրանք գիւղ ևս մտնեն. հողագիտութիւնը ոչ ի հաշիւ ուրիշ առարկաների, այլ ընդհանուր կրթական միւս գիտութիւնների հետ զուգահեռաբար գիւղ պէտք է մտնի ժողովրդական համալսարանների դրօշակի տակ:

Ժողովրդական համալսարանների Պետերբուրգի նորերս վերջացած համաժողովր ցանկութիւն յայտ-

նեց, որ ժողովրդական համալսարաններին կից գիւղատնտեսական սեկցիաներ (ենթաճիւղեր) ևս հիմնուեն. համաժողովր շատ կարևոր նշանակութիւն է տալիս դրան:

Մեր քաղաքները, ինչպէս Սխալցխան, Սխալքալաքը, Սլեքսանդրոպոլը, Երևանը կարող էին իրանց վրայ վերցնել այդ աշխատնքը շրջակայ գիւղերի համար, որոնց ուսուցիչները իրանք անձեռնհաս են ժողովրդական համալսարանների գաղափարը իրականութիւն դարձնելու և կամ որտեղ ուսումնարաններ բոլորովին չկան:

Այդ տեսակէտից օրինակ կարող է ծառայել Բաթումը, որ վերջերս երեկոյեան դասընթացներ է հիմնել թէ քաղաքի հասակաւորների և թէ շրջակայ գիւղացիների համար:

Այդ յատուկ զրոյցները պէտք է տեղի ունենան կիւրակի օրերը, կէսօրից յետոյ, որպէսզի շրջակայքի գիւղացիները յարմարութիւն ունենան ներկայ գտնուելու:

Դանդաղէլ չի կարելի, երկրի աղքատացման դէմ ուղղուած կռիւր կուլտուրական ոյժերի ահագին լարումն է պահանջուծ:

Մենք չունենք դեռ ևս — և յայտնի էլ չէ, թէ երբ կունենանք — տեղական դեմոկրատիկ ինքնավարութիւն, որը դրա մասին հոգս քաշէր. արդէն շնորհիւ Թիֆլիզի քաղաքային վարչութեան ութժամեայ բանւորական օր հաստատելուն (որը պատիւ է բերուծ նրան) կասկած չկայ, որ ժողովրդական համալսարաններում լսողների թիւը

կ'եռապատկուի, մինչև իսկ աւելի կրմեծանայ, որոնք իրանց ձեռք կրվերցնեն կուլտուրական-կրթական գործօնները:

Պէտք է օգտուել 1907 թ. մարտի 4-ի օրէնքի բարիքներով, որը իրաւունք է տալիս ժողովրդի համար գրոյցներ սարքել բոլոր առարկաներից:

Նոգ չէ, եթէ սկզբում քիչ մարդ ճարուի, հոգ չէ, եթէ գործը չնչին ծաւալ ունենայ. դա մեր հասարակութեան առողջացման ուղիղ ճանապարհն է:

Թո՛ղ այս գրքոյլը ձեռնարկ լինի նրանց, որոնք գիւղացիների համար գրոյցներ կրսարքեն:

Սչդ նպատակով մօտիկ ապագայում կըսկըսենք հրատարակել գիւղատնտեսական մի փոքրիկ գրագարան. արդէն դիմել ենք մեզ յայտնի հողագէտներին, որոնք խոստացան իրանց լուծան նուիրաբերել յօգուտ բազմատանչ, զժբաղդ գիւղացիութեան:

Կուլտուրական աշխատանքի հարցը էապէս ո՛չ այնքան կողմնակի արդելքների շուրջն է պտտում, որքան իրա, ժողովրդական մասսայի ինքնագործունէութեան և նրա զիտելիքներ ձեռք բերելու ձրգտումին, ամենատեսակ փոխադարձ օգնութիւն կազմակերպելուն:

Մենք թոյլ ենք կապուած մեր համաքաղաքացիների հետ, զուրկ ենք հասարակական պարտականութեան զարգացած զգացմունքից, ուստի և ընդհանուրի վերաբերեալ գործով հետաքրքրոււմ

ենք լոկ ոգևորութեան րոպէին կամ երբ նրանից անյապող արդիւնք ենք սպասում:

Յանցանքը քաղաքական և հասարակական կարգին վերադրելը, չնայած իր յարաբերական իրաւացիութեան, նոյն իսկ վնասակար է, որովհետև արգարացնում է մեր ծուլութիւնը:

Գործ է պէտք, բաւական է լոկ խօսքը, աշխատանք է պէտք:

Ներկայ գրքոյկիս երկրորդ կիսաբաժնում ցուցմունքներ կան, թէ ինչպէս պէտք է բարձրացնել գիւղացիութեան բարեկեցութիւնը, սակայն գիւղացիութիւնը ինքը պէտք է աշխատի այդպիսի ողբալի վիճակից դուրս գալու:


Թո՛ղ այս գաղափարները ճշմարտութիւն դառնան լայն մասսայի համար, այն ժամանակ այդ ճշմարտութիւնը իրականութիւն կըդառնայ:

Մեր ամբողջ եռանդը, ոյժը պէտք է ուղղուի գիւղական ինտելիգենցիա ստեղծելու գործին:

ԲԺ. Ա. ԲՈՒԴՈՒՂԵԱՆ

15 յունուարի 1908 թ.

Ս.Պետերբուրգ



- 1) Ստաֆիլոկոկկ.
- 2) Ստրեպտոկոկկ.
- 3) Փայտիկներ (բացիլներ):
- 4) Դիբրիոկոկկ.
- 5) Սպիրիլներ (պարուրածև):

Ա.

Նեգիենան — առողջապահութիւնը ուսուցանում է առողջութեան մասին:

Բուժական բժշկականութիւնը ձգտում է արդէն առաջացած հիւանդութիւնը բժշկելու, իսկ առողջապահութիւնը տարբերում է բժշկականութիւնից նրանով, որ ձգտում է հիւանդութիւնների առաջն առնելու և վերացնելու մարդուն շրջապատող այն պայմանները, որոնք այս կամ այն չափով նրա առողջութեան վրայ կարող են վատ ազդեցութիւն գործել:

Այդ նպատակը իրագործելու համար առողջապահութիւնը ուսումնասիրում է միջավայրի ազդեցութիւնը մարդու օրգանիզմի վրայ, մատնացոյց է անում այն պահանջները, որոնց պէտք է բաւարարութիւն տրուի առողջութիւնը պահպանել կարողանալու համար և ցոյց է տալիս առողջութեան համար վնասակար պայմանները:

Օդը, հողը, ջուրը, սնունդը, բնակարանների շինուածքը և պարապմունքները, մի խօսքով այն ամենը, որը այսպէս թէ այնպէս կապ ունի թէ մարդու և թէ կենդանու կեանքի և զօյութեան

հետ՝ Կրանց առողջութեան վրայ գործած ազդեցութեան տեսակէտից առողջապահութեան ուսումնասիրութեան նիւթն է կազմում:

Առողջապահութեան պահանջները չեն կարողացել կեանքի մէջ քիչ թէ շատ նշանաւոր չափով մտնել, եթէ դա ամբողջապէս առանձին անհատի սեփական ուժերին է թողնուած եղել:

Մեզանից իւրաքանչիւրը, եթէ գիտակցօրէն վերաբերուի իր առողջութեան, կարող է, ի հարկէ, անբարեկազմ պայմաններից իրան որոշ չափով պաշտպանել. սակայն մենք չենք կարող ինքներս վերացնել օդի ապականութիւնը գործարանային քաղաքներում: Մենք չենք կարող մեր սեփական ուժերով լաւորակ ջուր ձեռք բերել և ոչ ամեն անգամ կարող ենք վատորակ ուտելիքներէրից խոյս տալ:

Այդ պատճառով էլ, եթէ առողջապահական միջոցները սահմանափակուէին լոկ անձնական, անհատական առողջապահութեամբ, այն ժամանակ այդ գիտութեան առողջարար նշանակութիւնը շատ էլ մեծ չէր լինի:

Կուլտուրական բոլոր պետութիւններում առողջապահութեան խնամքը իրօք կառավարութեան հոգան է կազմում և դրա համաձայն առողջապահութեան կարեւորագոյն մասը հասարակականն է:

Մարդու կեանքի պարագաները առողջացնելու նպատակով առողջապահութեան եզրակացութիւնների հիման վրայ ձեռնարկուած միջոցները սանիտարական, առողջացուցիչ միջոցներ են կազմում:

Իր հետադատութիւնների և եզրակացութիւնների համար առողջապահութիւնը օգտուում է Ֆիզիկայից (բնագիտութիւն), քիմիայից, Ֆիզիոլոգիայից (բնախօսութիւն) և մի շարք այլ գիտութիւններից:

Վերջիններիս մէջ առանձին նշանակութիւն ունի առողջապահութեան համար հիւանդացման և մահացութեան վիճակադրութիւնը (ստատիստիկա):

Մենք արդէն ասացինք, որ առողջապահութեան գլխաւոր խնդիրներից մէկը հիւանդութիւնների կանխումն է:

Իրա հիման վրայ հիւանդացումն, այսինքն որոշ շրջանում հազար բնակչի վրայ ընկնող հիւանդացողների տարեկան թիւը կարող է իբրև յայտանշան (չափ) ծառայել այդ շրջանի թէ՛ սանիտարական պայմանների և թէ՛ հիւանդութիւնները կանխելու նպատակով ձեռնարկուած միջոցների յաջողակութեան աստիճանի համար:

Մահացութիւնը, այսինքն հազար բնակչից մեռնողների քանակութիւնը ցոյց տւող թիւը մասամբ միայն կախումն ունի հիւանդացումից, և ոչ թէ բացառապէս:

Մարդիկ, ինչպէս և կենդանիները մեռնում են ոչ միայն հիւանդութիւններից և դժբաղդ դէպքերից, այլ և ծերութիւնից, այսինքն՝ եթէ մարդու կեանքը չկարճուի էլ մահաբեր հիւանդութիւնից կամ դժբաղդ պատահարից, այնուամենայնիւ մարդ վախճանւում է որոշ հասակին հասնելուց չետոյ:

Ընդունուած է, որ մարդկային կեանքի, այս-

պէս ասած, նորմալ տեղութիւնը հաւասար պիտի լինէր միջին թւով 70—80 տարուայ:

Սակայն իրօք նոյն իսկ ոչ հիւանդութիւններէից ու պատահարներէից մեռնողների թուից բնական է միայն հասնում վերոյիշեալ հասակին, ընդ որում նրանց վաղահաս մահը կախուած է շրջապատող այն անբարեկազմ պայմաններից, որոնց դէմ կռիւ է մղում առողջապահութիւնը:

Այդ պատճառով էլ որոշ շրջանի, քաղաքի կամ զիւղի ազգաբնակչութեան կեանքի միջին տեղականութիւնը առողջապահութեան համար մեծարժէք ցուցմունք է այս կամ այն պայմանների մէջ կեանքի նշանակութեան նկատմամբ, նոյնպէս և առողջացուցիչ միջոցների յաջողութեան աստիճանացոյց:

Այդպէս ուրեմն.

Վիճակազրուութեան համար օգտուում են որոշ հասակի հազար բնակչից մեռնողների և ծնողների թւով:

Եթէ բոլոր մարդիկ մինչև 75 տարեկան հասակը ապրել կարողանային, այն ժամանակ տարեկան մահացութիւնը հաւասար պիտի լինէր իւրաքանչիւր հազար հոգուց մօտաւորապէս 13—14:

Այն ինչ իրօք հազար հոգուն ընկնում է տարեկան 24—37 մեռնող:

Մեր քաղաքներում կայ քիչ թէ շատ զոհացուցիչ վիճակազրուութիւն, սակայն հետաքրքիր է իմանալ զիւղերի մահացութիւնն ու ծնունդը:

Այդ կողմից ևս մեր ուսուցիչների ու հոգևոր

պաշտօնեաների վրայ մեծ պարտականութիւն է ընկած:

Առաջարկում ենք զիւղական մեր բանիմաց և ինտելիգենտ զասակարգին իւրաքանչիւր տարուայ վերջին անպատճառ հաշիւ ուղարկել մեր լրագրներին այդ հասակների մասին. այդ հարցերին լուրջ ուշադրութիւն պիտի դարձնել:

Մարդիկ, ինչպէս և կենդանիները, ամենից աւելի վարակիչ հիւանդութիւններից են մեռնում:

Բ.

Վարակիչ են կոչուում այն հիւանդութիւնները, որոնք առաջանում են մարմնի մէջ յատուկ միկրոբներ (միկրօօրգանիզմ) մտնելուց:

Կան միկրօբներ, որոնք, մարդու մարմնի մէջ մտնելով՝ կամ բոլորովին չեն զարգանում, կամ, թէև զարգանում են, սակայն նրա վրայ վատ ներգործութիւն չեն անում:

Խոշորացուցի տակ միկրօբները կէտերի նման են երևում և կոկկ են կոչուում, երբ դասաւորւած են լինում բաժան-բաժան. զոյգ-զոյգ դասաւորուած լինելու դէպքում զիբրկոկկ են կոչուում. կոկկերից ոմանք շղթայաձև են դասաւորուած լինում՝ ստրեպտոկոկկ և կամ ողկոյզաձև՝ ստաֆիլոկոկկ:

Միկրօբների միւս տեսակները լինում են փայտիկների ձևով՝ բակտերիաներ կամ բացիլներ և պարոչրի ձևով սպիրիլներ:



Միկրոբները բազմանում են անչատման միջոցով, այսինքն՝ իւրաքանչիւր միկրոբ չափահաս դառնալուց յետոյ երկու նոր, երիտասարդ օրգանիզմի է բաժանուում:

Հիւանդաբեր միկրոբների մի քանի տեսակները ընդունակ են բեղմնիկներ, այսինքն՝ պարզ ասած, սերմ (սպորի) գոյացնելու, իսկ բեղմնիկները այն առանձնայատկութիւնը ունին, որ շատ աւելի դիմացկուն են կործանիչ ազդեցութիւնների դէմ և առհասարակ շատ կենսունակ են և երկարակեաց:

Հիւանդաբեր միկրոբները իրանց ապրելու ձևի տեսակէտից մակաբույծներ են հանդիսանում, այսինքն՝ մարդկային կամ կենդանական օրգանիզմի հաշուին են ապրում. այնպէս, ինչպէս գլխատները (ճիճուներ), տրիխինները և այլն, որոնք միկրոպարազիտ են կոչւում:

Մակաբույծների այդ երկու տեսակի զանազանութիւնը ո՛չ միայն մեծութեան մէջ է կայանում, այլև մարդկային օրգանիզմի վրայ նրանց գործած ազդեցութեան ձևի մէջ:

Մինչդեռ գլխատների և նրանց նմանների վատ ներգործութիւնը երևան է գալիս իրանց ապաստանած օրգանը քայքայելով կամ օրգանիզմի սնուցիչ հիւթերը խլելով, վերջինս հիւժեղու մէջ, ինչպէս օրինակ գլխատները մարսողական գործարանում և տրիխինները մկաններում \*)—հիւանդաբեր

\*) Տե՛ս իմ «Նուէր շինուորներին» գրքոյի:

միկրոօրգանիզմները հիւանդութիւններ են առաջացնում իրանց կենսական գործունէութեամբ առաջացրած արդիւնքներով՝ տոկսիններով մարդկային օրգանիզմը թունաւորելով:

Հիւանդարար բոլոր միկրոօրգանիզմները առանց բացառութեան մակաբույծներ չեն. նրանցից մի քանիսը կարող է աճել նաև մարդկային օրգանիզմից դուրս՝ հողի, ջրի, բնութեան այլևայլ առարկաների վրայ:

Այդ հանգամանքը չափազանց կարևոր նշանակութիւն ունի վարակիչ հիւանդութիւնների տարածման ձևի մէջ:

Բանը այն է, որ դեռ շատ առաջ քան միկրոօրգանիզմների իբրև վարակիչ հիւանդութիւնների պատճառ ընդունուելը նկատուած էր, որ մի քանի հիւանդութիւններ, ինչպէս օրինակ ծաղիկը, բժաւոր տիֆը, սիֆիլիսը միմիայն մարդուց են անցնում ուրիշ մարդու և երբէք չեն բռնում ուրիշին՝ առանց հիւանդի կամ նրա վարակած առարկաների հետ անմիջական յարաբերութիւն ունենալու. այդ հիւանդութիւնները կոնտագիոզ հիւանդութիւններ են կոչւում:

Յետոյ, յայտնի էր, որ մի քանի այլ հիւանդութիւններ երբէք մարդուց չէին անցնում ուրիշ մարդու, այլ մի ուրիշ ճանապարհով, ինչպէս, ենթադրում էին, օդի միջով, ուստի և զրանք միազմատիկ հիւանդութիւններ կոչուեցին, ինչպէս դողերոցը (մալեարիան) և ստոլբենակ:

Յայտնի էին վերջապէս երրորդ կարգի հիւան-

դուժիւններ, որոնք փոխուում էին մարդուն երբեմն անմիջապէս հիւանդից, երբեմն էլ առանց հիւանդի հետ անմիջական յարաբերութիւն ունենալու. այդ կարգի հիւանդութիւնները կոնտագիոզ-միազմատիկ հիւանդութիւններ են կոչուում:

Վարակիչ հիւանդութիւնների բակտերիոզիական ճշգրիտ ուսումնասիրութիւնը հաստատել է հիւանդութիւնների տարբերութիւնը ըստ նրանց տարածման ձևի և միևնույն ժամանակ պարզել է այդ տարբերութեան պատճառները:

Կարմրուկ, քութէշ, ծաղիկ, բարակացաւ, բծափֆ, սիֆիլիս և ջրվախութիւն առաջացնողները բացառաբար, կամ այլ կերպ ասած, պարտաւորեցուցիչ կերպով այն մակաբոյժներն են, որոնք կարող են ապրել և բազմանալ միայն օրգանիզմի և տաքարիւն կենդանիների (մի քանիսի) մէջ, իսկ օրգանիզմից դուրս նրանք ամենևին չեն բազմանում և կարող են լոկ անգործուենայ — թէև կենսունակ — դրութեամբ ապրել այն էլ որոշ, աւելի կամ պակաս ժամանակ:

Այդ միկրօօրգանիզմները դուրս են գալիս օրգանիզմից մէզի, մաղասի (խուխի), թարախի և ժահրապալարի միջոցով:

Այդպիսով ուրեմն այդ հիւանդութիւններով կարելի է վարակուել կամ անմիջապէս հիւանդից, կամ հիւանդի վարակած ո՛րէէ առարկայի միջոցով, ինչպէս՝ զգեստի և տնային այլ պիտոյքների:

Իրանք հէնց այն հիւանդութիւններն են,

որոնք առաջ կոնտագիոզ հիւանդութիւններ էին կոչուում (կոնտակտ — հպումն):

Մնացած հիւանդութիւնները առաջացնում են մակաբոյժները, այսինքն նրանք կարող են ապրել և բազմանալ ո՛չ միայն մարդկային կամ կենդանական օրգանիզմի մէջ, այլև նրանցից դուրս, այլև-այլ միջավայրերում՝ հողի, ջրի մէջ և այլ տեղերում:

Ուստի հիւանդաբեր միկրօբների այդ տեսակները, հիւանդ մարդուց արտադրուելով և զարգացման բարեչափող պայմանների մէջ ընկնելով, կրբազմանան և նրանցով կարելի է վարակուել ո՛չ միայն անմիջականօրէն հիւանդից և նրա հետ շփումն ունեցած առարկայից, այլ և խմելու ջրի կամ փոշու միջոցով:

Հէնց դրանք են կոնտագիոզ-միազմատիկ հիւանդութիւնները:

Հէնց այստեղ էլ նկատենք, որ հիւանդաբեր միկրօբների աճման բարեչափող պայմաններն են կազմում ապականուած, օրգանական նիւթերով հարուստ ջուրն ու հողը, բնակարանների, բակերի և այլ տեղերի ամենատեսակ օրգանական աւելցուկներ և թափթփուկներ:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ տեսակ հիւանդաբեր միկրօբները, բնութեան մէջ զարգանալու լաչն ասպարէզ ունենալով, շատ հեշտութեամբ կարող են լաչն չափերով տարածուել, դրանցից է, օրինակ՝ խոլերան, փորհարինքը, սիբիրախտը և այլն:

2  
5  
5  
1  
9  
5  
5



Յիշեալ խմբի հիւանդութիւններից մի քանիսը, այն է՝ դողէրոցքը (ճահճային տենդ) և ընդարմացումն (ստոլբնեակ) մի այլ առանձնայատկութիւն ևս ունեն. դողէրոցքի միկրոբները (այլագմոքիաները) և սիբիրախտի փայտիկները համարեա բացառապէս այդ հիւանդութեամբ բրունուածների արիւնի մէջն են գտնուում և հիւանդի արտածութիւնների հետ անմիջականօրէն չեն դուրս գալիս, որի պատճառով առողջը գրեթէ երբէք չի վարակուում անմիջապէս հիւանդից, այլ սովորաբար արտաքին բնութիւնից:

Վերջին ժամանակուայ հետազօտութիւնները ցոյց են տուել, որ ճահճոտ վայրերում դողէրոցքի փոխադրողները որոշ տեսակի մոծակներ են:

Ընդհանրապէս միջատները, շփուելով հիւանդի վարակուած արտածութիւնների հետ, անմիջապէս, թէև դեռ քիչ պարզուած դեր են խաղում վարակումն տարածելու գործում:

Նոյն դերն են կատարում նաև աւելի խոշոր կենդանիները, օրինակ՝ մեծ մուկը ժանտախտի նկատմամբ, եղջիւրաւոր անասունները սիբիրախտի և ծիաները սապի նկատմամբ:

9.

Վարակիչ հիւանդութիւնների առանձնայատկութիւններից մէկն այն է, որ նրանք հակումն ունեն տարածուելու, մասսայական հիւանդացումն համարնարակ առաջ բերելու:

հիւանդը իր արտածութիւնների հետ միասին դուրս է բերում ահագին քանակութեամբ վարակիչ միկրոբներ, որոնք, եթէ դրանց ապավարակման դէմ միջոցներ չառնուեն, ընկնում են հիւանդին շրջապատող առարկաների վրայ, որի շնորհիւ վերջիններս ընդունակ են դառնում վարակելու այդ առարկաները գործածողներին. հիւանդի արտածութիւնները չորանալով, բարձրանում են օդի մէջ փոշու ձևով, որը իր հերթին վարակման աղբիւր է դառնում:

Եթէ վարակիչ միկրոբը ընդունակ է մարդկային օրգանիզմից դուրս ևս զարգանալու, նրա զարգացման բարեկաջող միջավայր կարող է ծառայել հէնց ինքը բնակարանը, կարող է մի բնակարանից միւսը տարածուել, մի տնից միւսը, կամ՝ գետին ընկնելով (աղտահորերի միջոցով, արտաթորութիւնները, մէզը գետին թափելուց) կրվարակէ նրան և այնտեղից կամ փոշու ձևով կրսփուռի օդի մէջ և կամ առաջ կ'անցնի ջրի հետ միասին:

Իրանց աւելանում են նաև միջատները՝ ճանճերը, լուերը, փայտօջիլները (բաղլինջ), որոնք բազմաթիւ են մանաւանդ անմաքուր պահպանող բնակարաններում և որոնք, ինչպէս ասացինք, նոյնպէս մասնակցում են վարակումն տարածելու գործին:

Վերոյիշեալից պարզ է, թէ ի՞նչ պայմաններ նպաստաւոր պէտք է լինին համահարակի տարածման համար:

Իրանք են մարդկանց համակուտակումն, չքա-

ւորութիւնը իր հետեանքներով՝ վատ սննդառութեամբ, բնակարանային վատ պայմաններով և այլն, անբերրիութիւնը, պատերազմները, հեղեղումները և «չարդերը» (պողոտմներ):

Սակայն և այնպէս, չնայած կենսական պայմանների նկատմամբ իրանց սակաւապահանջութեան, հիւանդաբեր միկրոբները իրանց կենսագործունէութիւնը երեւան հանելու համար միշտ բարեյաջող պայմաններ չեն գտնում թէ մարդկային օրգանիզմի և թէ արտաքին բնութեան մէջ:

Օրգանիզմը ընդունակ է իր մէջ մտած թըշնամու դէմ կռիւ մղելու: (Տե՛ս «Գոյութեան կռիւ» գրքույկս):

Վարակիչ հիւանդութեան ենթարկւում են գլխաւորապէս նրանք, որոնք թուլացել են, հիւժեղ անբաւարար սննդառութեան, կենսական վատ պայմանների շնորհիւ կամ որոնց օրգանիզմի գործառնութեան և արեան շրջառնութեան կանոնաւոր ընթացքը որեւէ պատճառով խանգարուած է, օրինակ՝ մրսելուց, մարսողութեան անկանոնութիւնից և այլն:

Սրտաքին բնութեան մէջ հիւանդարար սաղմերի զարգացման արգելք է հանդիսանում այս կամ այն տեսակի միկրոբին յատուկ սննդարար նիւթի բացակայութիւնը, օդի տաքութեան նրան անյարմար աստիճանը, միւս տեսակի միկրոբների մրցակցութիւնը և այլն:

Հիւանդարար միկրոբները անբարեյաջող պայ-

մաններում կամ կորչում են, կամ զարգանալով՝ նրանց թոշնի ազդեցութիւնը թուլանում է:

Այս յատկութիւններով են բացատրւում առանձին հիւանդացումների և համաճարակների տարածման ծաւալի ու վատորակութեան այն տատանումները, որոնք այնքան յաճախ են նկատւում և որոնց պատճառները քիչ անգամ է յաջողւում ճշտորիտ կերպով որոշել:

Քիչ առաջ ասացինք, որ առողջ, նորմալ օրգանիզմը շատ աւելի սակաւ է ենթարկւում վարակման, քան իր բնական դրութիւնը կորցրած օրգանիզմը, որ հետեւապէս որոշ նախահակումն գոյութիւն ունի դէպի վարակիչ հիւանդութիւնները:

Միւս կողմից, ընդհակառակը, նկատելի է, որ կան անժնաւորութիւններ և կենդանիներ, որոնց օրգանիզմը չի ընդունում, չի ազդւում վարակիչ հիւանդութիւններից, այսինքն որոշ անժնաւորութիւնը, որոշ կենդանին կամ կենդանիների ամբողջ մի շարք վարակիչ հիւանդութիւններով չեն բռնւում, չնայած վարակման համար բարեյաջող բոլոր պայմանների գոյութեան:

Գ.

Վարակիչ հիւանդութիւնները կարող են չ'ազդել օրգանիզմի վրայ կամ վերջինիս բնական յատկութիւնների և կամ արհեստական միջոցների շնորհիւ: Յայտնի է, որ որոշ հիւանդութիւններ միայն

կենդանիներին են յատուկ և մարդկանց չեն փոխ-  
 ւում, օրինակ՝ եղջիւրաւոր անասունների ժանտ-  
 ախտը. այլ հիւանդութիւններ բացառապէս մար-  
 դուն են յատուկ և կենդանիների մէջ չեն նկատ-  
 ւում, օրինակ՝ սիֆիլիսով մինչև այժմ անհնար է  
 եղել կենդանիներին վարակել, բացի կապիկների  
 մի ցեղը:

Կայ հիւանդութիւնների մի երրորդ խումբ  
 ևս, որոնց ենթակայ է կենդանիների մի որոշ  
 տեսակը միայն. այսպէս օրինակ՝ ժանտախտը, որով  
 միայն կրծողներն են (մեծ մուկ, սիմոր՝ սուս-  
 լիկ) վարակւում:

Յաճախ է նկատւում նոյնպէս, որ հիւանդնե-  
 րի հետ սերտ շփման մէջ գտնւող անհատները ան-  
 խոցելի են որոշ տեսակի հիւանդութիւնների նկատ-  
 մամբ:

Բացի այդ, յայտնի է, որ մի անգամ որոշ  
 վարակիչ հիւանդութեամբ բռնուած անձինք յետա-  
 զայում կամ այլևս երբէք կամ գոնէ որոշ ժամա-  
 նակամիջոցի ընթացքում չեն վարակւում այդ հի-  
 վանեութեամբ:

Նման անխոցելիութիւն նկատելի է այն անձ-  
 նաւորութիւնների միջին, որոնք մի անգամ հիւան-  
 դացած են եղել արդէն տիֆով, կարմրուկով, բու-  
 թէշով, դիֆտերիտով և մի քանի այլ հիւանդու-  
 թիւններով:

Վերոյիշեալ բոլոր դէպքերում դեր է խաղում  
 բնական անխոցելիութիւնը կամ իմմունիտետը:

Իսկ արհեստական անխոցելիութեան ամենա-  
 յայտնի օրինակը ծաղկապատւաստումն է:

Մարդու կամ հորթի ծաղկի թարախը մար-  
 դուն պատւաստելուց՝ վերջինիս վրայ թեթև ծաղկի  
 նման մի բան է առաջ զալիս և դրանով նա ան-  
 խոցելի է դառնում բնական ծաղկի դէմ:

Կենդանիներին անխոցելի կարելի է դարձնել  
 ուրիշ շատ թոյների (հիւանդութիւնների) նկատ-  
 մամբ ևս՝ օրինակ՝ դիֆտերիտի, սառլքնեակի  
 (ընդարմացման), սիբիրախտի, չրվախութեան, պատ-  
 վաստելով համապատասխան միկրոբների սկզբում  
 փոքրաքանակ ու թոյլ, և ապա հետզհետէ մեծա-  
 քանակ և աւելի ուժեղ լուծուածք:

Արհեստականօրէն անխոցելի դարձրած այդ  
 կենդանիների արեան շիջուկը մարդու կամ կեն-  
 դանու մարմնի մէջ մտցւելով, ընդունակ է դառ-  
 նում վերջինները համապատասխան հիւանդութեան  
 դէմ անխոցելի դարձնել նոյնպէս և արդէն զարգա-  
 ցած հիւանդութիւնից բժշկել:

Դրա վրայ է հիմնուած դիֆտերիտի բուժումը  
 ժանտախտի հակադիֆտերիտային Իերսէնի շի-  
 շուկով:

Բուժական, մասամբ էլ նախազգուշական  
 նպատակներով մարդու համար գործ է ածւում  
 նաև ժանտախտի դէպքում մահացած բակտերիա-  
 ների լուծուածք, ինչպէս օրինակ՝ Խաւկինի աւիշը  
 և չորացնելով թուլացրած վարակուած նիւթ. իսկ  
 չրվախութեան դէպքում գործ է ածւում Պաստերի  
 պատւաստը:

Անհրաժեշտ է կանգ առնել նաև վարակիչ հիւանդութիւնների ծածուկ կամ ինկուբացիօն շրջանի վրայ:

Վարակիչ հիւանդութիւնները նկատելի են դառնում ոչ թէ վարակուելուց անմիջապէս յետոյ, այլ դրանից սկսած մինչև հիւանդութեան առաջին նշանների երևան դալը սովորաբար որոշ ժամանակամիջոց է անցնում, որը իւրաքանչիւր տեսակի հիւանդութեան համար առանձին տեղութիւն է ունենում՝ սկսած մի քանի ժամից մինչև մի քանի օր և շաբաթ:

Այդ ինկուբացիօն շրջանը, որի ընթացքում արդէն վարակուած մարդը զեռ ևս առողջ է մնում ինչպէս յետոյ կրտեսներէք նախազուշական միջոցների տեսակէտից չափազանց կարևոր նշանակութիւն ունի:

Ե.

Որովհետև վարակուած հիւանդը իր հիւանդութեան ամբողջ ընթացքում վարակման աղբիւր է հանդիսանում, ուստի հիւանդութիւնը երևան գալուց անմիջապէս յետոյ պէտք է նրան այնպիսի պայմանների մէջ դնել, որ այլևս վարակման տարածուելու վտանգը կամ բոլորովին վերացուած լինի և կամ զոնէ հնարաւոր միջոցներով (ամենաբիւջ չափ) հասցուած լինի:

Դրա համար նախ և առաջ անհրաժեշտ է հիւանդին առողջներից շոկել, առանձնացնել:

Հիւանդի առանձնացման ամենալաւ միջոցը նրան հիւանդանոց գետեղելն է, որտեղ հիւանդը բոլորովին մեկուսացած, չոկ սենեակում կրլինի և կամ միջոցներ ձեռք կառնուին նրա արտաթորութիւնները վարակազուրկ դարձնելու համար:

Եթէ հնարաւորութիւն չկայ հիւանդանոց գետեղելու, հիւանդին պէտք է չոկ սենեակ տանել, չթողնել նրա մօտ աւելորդ մարդկանց, բացի նրանցից, որոնք անհրաժեշտ են հիւանդին խնամելու. իսկ արտածութիւնների կամ հիւանդի հետ շփումն ունեցած առարկաների հետ հետևեալ կերպով վարուել:

Հիւանդին հեռացնելով կամ առանձնացնելով վարակման առաջն առած չենք չինի դեռ. հիւանդի բռնած սենեակը և նրանում գտնուած իրերը կարող են վարակուել հիւանդի արտաթորութիւններով, ուստի և պէտք է դրանք մաքրել, վարակիչ միկրօբներին սպանել:

Դա ախտահանութեան (դեզինֆեկցիա), ապա վարակման միջոցով է կատարուում: Ախտահանութեան համար կամ օդի տաքութեան աստիճանն են բարձրացնում և կամ զործ են ածում միկրօբների համար թունաւոր քիմիական միջոցներ:

Հիւանդարար միկրօբներից շատերը ոչնչանում են 50—60° C. տաքութեան մէջ, սակայն մի քանի տեսակ բակտերիաների բեղմնիկները (սպորները) կարողանում են չոր տաքութեան հարիւր, հարիւր քսան և մինչև իսկ աւելի աստիճան տանել:

Բայց նոյն բեղմնիկները շատ շուտով ոչնչանում են, եթէ խոնաւ տաքութեան հարիւր աստիճանին ենթարկուին:

Այդ հիման վրայ ներկայումս ախտահանութեան համար վարակուած առարկան եփ են տալիս ջրի մէջ մօտ քսան րոպէ, կամ ախտահանում են հոսող գոլորշիով՝ իրանց շինուածքով չափազանց բազմաթիւ ախտահանիչ գործիքների միջոցով:

Անշուշտ գոլորշու միջոցով կատարուած ախտահանութիւնը ամենավստահելին է, սակայն մի քանի առարկաներ անկարելի է այդ ձևով ախտահանել, օրինակ՝ կաշուեղէնները, մորթերը փչանում են. հասկանալի է, որ բնակարաններն ևս անյարմար են չիշեալ ձևի ախտահանութեան համար:

Ուստի և գոլորշու միջոցով կատարուած ախտահանութեան հետ միասին աւելի մեծ չափով գործածական են նաև ախտահանիչ յատկութիւն պարունակող քիմիական միջոցները:

Ահա ներկայումս ընդունուած ախտահանիչ էժանագին և պարզ միջոցներից մի քանիսը.

1. Կրակաթ Դա հետևեալ կերպով է ստացւում. անշէշ, կամ աւելի լաւ հէնց նոր այրած լաւորակ կիրը հանգցնում են հաւասար չափով (կամ քիչ աւել) ջրի մէջ փայտէ կամ կաւէ ամանում. ջուրը աստիճանաբար պէտք է աւելացնել, կիրը լաւ խառնելով:

Եթէ հնար չկայ կշռել կիրն ու ջուրը, այն

ժամանակ պէտք է միայն այնքան ջուր, որքան կրներծծի կիրը:

Կարևոր է հետևել, որ կիրը անօթի տակին կուտակուած չմնայ, այլ պէտք է աշխատել, որ կտորները ըստ հնարաւորութեան միապագաղ շերտ կազմեն և ջուրը ամանի տակից ծծեն:

Նանգըրած կիրը սպիտակ, փափուկ փոշի է, որը կարելի է պահել լաւ խցած ապակէ ամանի մէջ. ծանրութեամբ (քաշով) մի մաս կիրը չորս մաս ջրի հետ խառնելով, կարելի է 20% երկաթ ստանալ:

2. Սուլեմալի լուծուածք. ախտահանութեան համար գործ է ածւում մի մաս սուլեմա՝ խառնած 1000 մաս ջրի հետ. մի դոլլ (12,5 լիտր) լուծուածք ստանալու համար պէտք է վերցնել 12,5 գրամ (3 մսխալ) սուլեմա. լուծուածքը ջրի տեղ չընդունելու համար ամանի վրայ պէտք է զրել «թոյն» խօսքը:

3. Ֆորմալինը գործ է ածւում ախտահանութեան համար 2% և 4% լուծուածքով. 2% լուծուածք ստանալու համար ծախու 40% ֆորմալինը լուծում են 19 մաս ջրի մէջ. ֆորմալինը տաք և լոյս տեղ չպէտք է պահել:

4. Կարբոլեան թթուի լուծուածք: Կարբոլեան թթուն գործ է ածւում 5% լուծուածքով, որը պատրաստելու համար պէտք է 5 մաս զուտ, բիւրեղային կարբոլեան թթու խառնել 95 մաս (ըստ ծանրութեան) մաքուր ջրի հետ. հետևապէս մի դոլլ (12,5 լիտր) լուծուածք ստանալու համար

պէտք է մէկ և կէս ֆունտ բիւրեղային կարբո-  
լէան թթու վերցնել:

5. Օճառակարբոլէան թույլ լուծուածքը պատ-  
րաստում են՝ երկու մաս կանաչ օճառից (սապոնից),  
երեք մաս կարբոլէան բիւրեղային զուտ թթուից  
և ինսուն և հինգ մաս ջրից. իսկ թունդ լուծ-  
ւածք պատրաստելու համար պէտք է վերցնել մի  
դոյլ ջրին մի ֆունտ կանաչ օճառ և մէկևկէս  
ֆունտ կարբոլէան թթու: Սկզբում ջրի մէջ լու-  
ծում են կանաչ սապոնը, իսկ յետոյ շարունակա-  
բար խառնելով կամ ժած տալով աւելացնում են  
կարբոլէան թթու և, եթէ համեմատական չափերը  
հիշտ են, վերջինս ամբողջովին կըլուծուի, առանց  
ամանի տակին կուտակուելու. լուծուածքը թա-  
փանցիկ է լինում և դեղնադոյն:

Որքան բարձր է օճառակարբոլէան լուծուածքի  
տաքութեան աստիճանը, այնքան լաւ է ներգոր-  
ծում, օրինակ՝ 40—65° R. (շատ յարմար է սպի-  
տակեղէնի, բրդեղէնի, մետաղեղէնների, յատակի ու  
պատերի համար և այլն):

Ախտահանիչ գազային միջոցներն են՝ յայտնի  
ծծումբը, իսկ ամենից լաւ՝ ֆորմալդեգիզը պրոֆ-  
ժիւլգզէի և Պրաուսնիցի գործիքի միջոցով:

Այդպէս ուրեմն՝ հոսող գոլորշի, եռացումն,  
օճառակարբոլէան լուծուածք, սուլեմա. իսկ ինչ որ  
կարելի է այրել, օրինակ՝ դոշակ, բարձ՝ եթէ դար-  
մանով է լցրած, պիտի ոչնչացնել: Կեղտոտ լուսաքը  
անպայման պէտք է չորս ժամ սուլեմայի լուծ-  
ւածքի մէջ պահել և ապա լուանալ տալ:

Հիւանդի արտաթորութիւնները ամենից լաւ է  
թաղել փոսի մէջ, այն էլ անպայման 20% երկաթ  
խառնած. արտաթորութիւնների ամանի մէջ ևս ան-  
պատճառ սուլեմա կամ կարբոլ պիտի լինի, որքան  
կանոնաւորութիւն և մաքրութիւն լինի, այնքան  
լաւ. չպէտք է մոռանալ նաև արեղակը:

Հիւանդին խնամողը ուրիշներին չպէ՛տք է  
այցելէ, ինքն էլ մարդ չպիտի ընդունէ, առհասա-  
րակ իրան հեռու պիտի պահէ ուրիշներից. պիտի  
աշխատի որ վարակը ուրիշին չդիպչի, ինքը երկիւղ  
չպիտի կրի և ոգու արիութիւնը չպէտք է կորցնի:

2.

Վարակիչ հիւանդութիւնների ընդհանուր յատ-  
կութիւնների մասին խօսելիս, չիշատակեցինք, որ  
նրանք դիպչում են զխաւորապէս այնպիսի ան-  
ձանց, որոնք թուլացել են կամ հիւժուել այս կամ  
այն վնասակար ազդեցութեան շնորհիւ, և որ այն  
վարակիչ հիւանդութիւնները, որոնց առաջացնող-  
ները մարդկային կամ կենդանական օրգանիզմից  
դուրս ևս կարող են ապրել, բազմաճառու բարեկա-  
ջող պայմաններ են զանում մանաւանդ այնպիսի  
տեղերում, որտեղ բնակարանները կամ դեռինը  
ապականուած է:

Իսկ որովհետև յայտնի է, որ մաքուր օդի  
պակասութիւնը, խմելու վատ ջրի գործածութիւնը  
և վատ սննդառութիւնը թուլացնում են մարդու  
օրգանիզմը, ուստի առանց բացատրութիւնների



հասկանալի է, որ համահարակի ժամանակ առանձնապատուկ կարեորութիւն ունի թէ՛ վարակուած և թէ՛ վարակուածն սպառնացող բնակավայրերի սանիտարական ընդհանուր դրութեան բարւոքումը:

Տարափոխիկ հիւանդութիւնների տարածման տեսակէտից առանձնապէս վտանգաւոր տարր է կազմում բանւորութիւնը, որ մեծ թւով համակուտակուած է քաղաքներում, շուկաներում (վարձելու համար) և այլն:

Էժանագին ճաշարանների և թէյատների միջոցով բանւորներին լաւորակ սնունդ մատակարարելը և զիշերելու օթեանների ձեով նրանց համար ապաստարաններ հիմնելը համահարակի տարածման առաջն առնելու ամենախրական միջոցներից մէկն է:

Համահարակը կանխելու համար շատ կարեւոր նշանակութիւն ունի — ինչպէս հետևում է վերև չիշատակուածից — նաև վարակման դէպքը անյապազ երևան բերելը, որովհետև այդ դէպքում միայն հնարաւոր է սանիտարական անհրաժեշտ միջոցներ ժամանակին ձեռք առնելը:

Ուստի և բոլոր երկրների օրէնսդրութիւնը խստութեամբ պահանջում է պաշտօնական և մասնաւոր մարդկանցից վարակիչ հիւանդութեան իւրաքանչիւր դէպքի մասին պատշաճ իշխանութեան իմաց տալ և խստօրէն պատժում է այդ պահանջը չկատարողներին:

Այստեղ պէտք էր մարդկանց վարակիչ հիւանդութիւնների մասին խօսել, սակայն դրանց

մասին թէ մենք և թէ ուրիշ բժիշկներ, ինչպէս բժ. բժ. Արծրունի, Տէր Իսահակեան և այլն, շատ անգամ ենք խօսել. ի դէպ տե՛ս իմ «Նուէր նորատի կանանց» և «Նուէր զինւորներին» զրքոյկներս: Անցնենք համահարակին, ինչպէս վերնագրած է զրքոյկս:

Է.

Մարդկանց նման կենդանիների մէջ ևս պատահում են տարափոխիկ հիւանդութիւններ, այսինքն այնպիսի վարակիչ հիւանդութիւններ, որոնք համեմատաբար կարճ ժամանակամիջոցում բազմաթիւ կենդանիների են զիպչում:

Այդ դէպքում «համահարակ» խօսքի փոխարէն «էպիզոօտիա» (համապահարախտ) է զործածւում, որ յուճարէն զօօն՝ կենդանի խօսքից է ծագում:

Այդօրինակ հիւանդացումները պայմանաւորւում են օրդանիզմից դուրս՝ զետնի, օդի, ջրի մէջ զարդացած վարակի կենդանու մարմնի մէջ մրտնելովը կամ արդէն զարդացած վարակի հիւանդ կենդանուց առօղջին փոխանցնելովը. զրանք են՝ սապ, ջրվախութիւն, եղջիւրաւոր անասունների ժանտախտ, դաբաղ, ծաղիկ, թօքերի տարափոխիկ բորբոքումն:

Կան երրորդ տեսակի հիւանդութիւններ ևս, որտեղ արտաքին աշխարհից մարմնի վրայ ընկած

վարակը կենդանի օրգանիզմից է ծագումն ստացել: այդպէս է, օրինակ, սիբիրախտը:

Վարակիչ հիւանդութիւնները տարածուում են երկու ճանապարհով՝ կամ վարակը մէկ անասունից փոխանցուում է մի ուրիշին և կամ այդ վարակը հողի (օրինակ կենդանիների դիակը թաղելիս), ջրի, կերի մնացորդի կամ այլ առարկայի վրայ է ընկնում:

Վարակիչ միկրոբը կարող է որոշ ժամանակ պահպանուել, առանց իր ոյժը կորցնելու և կամ դիմացկուն սերմեր՝ բեղմնիկներ (սպորա) զոյացնել, որոնք խմելիքի, կերի և փոշու հետ կենդանի օրգանիզմի մէջ ընկնելով, բակտերիա են դառնում, արագօրէն զարգանում են և հիւանդութիւններ առաջացնում (սիբիրախտի բեղմնիկները հողի մէջ կարող են տասներկու տարուց աւել մնալ):

Տեղական յատուկ պայմաններ յանախ նպաստում են այն հանդամանքին, որ վարակը միուէ վայրից չի դուրս գալիս կամ ընդհակառակը կան տեղեր, որտեղ վարակը լայնարձակ զարգացման բարեյաջող պայմաններ է գտնում:

Վարակիչ միկրոբը կարող է զարգանալ օդի միջով տեղափոխուելով (30—50 սաժէն), հիւանդ և առողջ կենդանիների անմիջական շփումով, որը կարող է տեղի ունենալ երկուսին մի գոմում պահելուց կամ նախապէս հիւանդ կենդանիներ գտնուած գոմում տեղաւորելուց:

Վարակը կարող է տարածուել վերջապէս զանազան առարկաների՝ կաշուի, բրդի, մսի, ոսկոր-

ների և մսեղէնի այլ մասերի, նոյնպէս և կերի, աղրի, ձիասարքի, մարդկանց, շների, թռչունների տեղափոխութեամբ:

Վարակիչ միկրոբը ներշնչուում է թոքերի մէջ, մարսողական գործարաններն է ընկնում, ներս է մտնում վիրաւորուած, փչացած կաշուի և լորձաթաղանթի միջով (եղջիւրաւոր անասունների ժանտախտ, դարաղ) և ապա մտնում է արեան մէջ:

Վարակը կենդանու մարմնի մէջ մտնելուց մինչև հիւանդութեան առաջին նկատելի նշանները երեւալը, ինչպէս մարդկանց մէջ, որոշ ժամանակաշրջան է անցնում, որը ծածուկ, ինկուբացիօն շրջան է կոչուում, ինչպէս արդէն վերև յիշատակեցինք:

Այդ շրջանի տևականութիւնը կախուած է ի հարկէ հիւանդութեան տեսակից, կենդանու ցեղից, նոյնպէս և ուրիշ շատ, զեռ ևս չպարզուած հանդամանքներից:

Այդպէս, օրինակ, սիբիրախտի դէպքում ծածուկ շրջանը 1—7 օր է տևում. եղջիւրաւոր անասունների ժանտախտի դէպքում 4—6 օր. դարաղի (եաշու) դէպքում՝ 3—6 օր. ջրփախութեան դէպքում կատուններինը՝ 2—4 օր, ձիաներինը՝ 1—12 շաբաթ, շներինը՝ 3 օրից մինչև 7 ամիս:

Այդ ծածուկ շրջանի ժամանակ միկրոբները բազմանում են մարմնի առանձին օրգանների, մասերի կամ հեղուկների մէջ. հետևապէս կենդանիները կարող են արդէն այդ շրջանում վարակել առողջներին:

Հիւանդութեան տեղութիւնն և վախճանը կախումն ունի կենդանու տեսակից, տարուայ եղանակից, խնամելու, պահելու ձևից, կերից և այլն:

Հիւանդութիւնը կարող է տեւել սկսած մի քանի ընդհանր (սիրիբրախտի առանձին տեսակը) մինչև մի քանի տարի (բարակացաւը, խրոնիքական սապր):

Հիւանդութիւններից մի քանիսը բժշկուում են, օրինակ՝ դաբաղը. իսկ մի քանիսը անբուժելի են համարուում, օրինակ՝ եղջիւրաւոր անասունների ժանտախտը:

Գենդանիների հիւանդութեան դէմ ուղղուած կռուի մէջ առաջին տեղն են բռնում նախապաշտպանողական և անասնաբուժական — ոստիկանական միջոցները:

Որքան լաւ է կենդանու սննդառութիւնը, որքան լաւ խնամք է վայելում, որքան քիչ են համակուտակուած կենդանիները և որքան քիչ են նրանք ուժասպառ եղել — այնքան քիչ են կենդանու մարմնի մէջ վարակիչ էակների զարգացման համար նպաստաւոր պայմաններ:

Լաւ անասնատէրերը, իրանց կենդանիները վարակումից ազատ պահելու համար ամեն կերպ աշխատում են իրանց հօտը և առանձին կենդանիները ուրիշի տաւարի հետ շփուելուց հետո պահել:

Սնասնապահները չեն թողնում իրանց հօտը ուրիշին հետ արածելու, իրանց տաւարին առանձին արօտավայր են յատկացնում, ժամանակ առ

ժամանակ անասնաբույժ են հրաւիրում և իրանց կենդանիներին զննել տալիս:

Նօտի մէջ հիւանդացման հէնց առաջին դէպքը երևաց թէ չէ, անհրաժեշտ է հիւանդացած կենդանուն առողջներից անմիջապէս ջոկել, որպէսզի միւս կենդանիների վարակման առաջն առնուած լինի. սատկած կենդանուն պէտք է այրել կամ դիակը թաղել դեռնի մէջ ամենաքիչը երեք արշին խորութեամբ, իսկ վրան խլորային կիր (մի դոյլ ջրին մէկ և մի քառորդ ֆունտ) ածել և ապա հողով ծածկել. կերի մնացորդը, աղբը և այլն պէտք է այրել, շէնքը ախտահանել վերև չիշուած ձևով, անհրաժեշտ է կրակի լայն գործածութիւն:

Այժմ տեսնենք ամենայանախադէպ համաճարակները:

Ը.

Դարաղը, բերանակեղը (աֆտի) կովերի, խոզերի, այծերի և ոչխարների ամենայանախադէպ հիւանդացումներից մէկն է. (ծիւաների մէջ սակաւադէպ է):

Վարակը շատ հեշտութեամբ է փոխանցուում մի կենդանուց միւսին. վարակիչ է լորձուէքը, արտածութիւնները, արիւնն և մէզը. վարակափոխիչ կարող են լինել թէ՛ մարդիկ և թէ՛ զանազան առարկաներ՝ կերը, աղբը, կաշէղէնները:

Այդ հիւանդութիւնն առաջացնողը ճշտիւ չէ հետազօտուած:

Որոշ տարիներ այդ հիւանդութեամբ բռնուած է բերանի խոռոչը, այլ տարիներ սմպակներն ու կուրծք, երբեմն էլ թէ՛ մէկը և թէ՛ միւսը միասին:

Վարակուծից չետոյ մինչև հիւանդացման առաջին նշանները երեւոյր (ժածուկ շրջան) անցնում է 1—3—6 օր. այնուհետև տենդ է բռնում 40—41<sup>0</sup> և աւելի տաքութեամբ, կենդանին տրխրում է, դողդողում, դժուարութեամբ է ծամում և կլանում, լորձահոսութիւն է սկսում:

Լնդերքի, լեզուի և այտերը պատող լորձաթաղանթի վրայ ցամաքութիւն, տաքութիւն և կարմրութիւն է առաջանում, իսկ մէկ երկու օրից չետոյ բերանի և շրթունքների լորձաթաղանթի վրայ սիսեռի մեծութեամբ կամ աւելի խոշոր սպիտակաւուն կամ դեղին բշտիկներ են երևան դալիս. այդ բշտիկները սկզբում թափանձիկ, ապա թառախակալած հեղուկով են լցւում:

Մէկ երկու օրից բշտիկները (պուստուլի) տրաքւում են, խոցեր են գոյանում, որոնք երբեմն արագ, երբեմն էլ երկար ժամանակ անցնելուց չետոյ են զարգանում:

Բերանի խոռոչից հիւանդութիւնը արագութեամբ տարածւում է ամբողջ երակի, ստամոքսի և աղիքների վրայ (կենդանին չաճախ մարսողութեան խանգարումից է ընկնում) և կամ քթի խոռոչի, շնչափողի, մինչև իսկ կոպերի լորձաթաղանթի վրայ:

Եթէ հիւանդութիւնը ոտներին է դիպչում, այն ժամանակ սմբակների վրայ և նրանցից վերև

կարմրութիւն, տաքութիւն և ցաւ է առաջ դալիս, իսկ մէկ երկու օրից չետոյ կնդակների արանքում թարախակալած բշտիկներ են գոյանում, որոնք շուտով տրաքուելով կամ խոցեր են գոյացնում և կամ արմատի նման պնդանում:

Հիւանդութիւնը երկու շաբաթ տևելուց չետոյ, կենդանին սովորաբար առողջանում է:

Նոյնպիսի բշտիկներ և խոցեր կարող են գոյանալ կենդանու կրծի և ձուակալի վրայ:

Թէև դաբաղից սակաւ անգամ է ընկնում կենդանին, սակայն այդ հիւանդութիւնը բաւականին վնասներ է հասցնում անասնապահին:

Ցաւարը չափից դուրս լղարում է, ոչնչանում են հորթերը, ծանրած կովերը վիժում են, կաթնտուկովերի կաթը դեղնում է, եփ տալիս հեշտութեամբ մակարդւում (մէրում է), քանակութիւնը նուազում, կրծի բորբոքումն է առաջ դալիս, և ընդհանրապէս կովը կորցնում է իր կաթնտուկութիւնը:

Դաբաղով հիւանդացած կովի հում կաթ խմող անձերի մարսողական գործարանները խանգարւում են և մարմնի տաքութեան աստիճանը բարձրանում. իսկ երեխաների բերանի և շրթունքների լորձաթաղանթի վրայ բշտիկներ են դուրս դալիս, որոնք շուտով տրաքւում են և խոցեր դառնում:

Դաբաղը չափազանց արագ է տարածւում. աւելի շուտ, քան ժանտախտը, այդ պատճառով էլ հօտի մէջ մի կենդանին հիւանդանալիս, մնացած բոլորը արդէն վարակուած են լինում, ուստի և

հիւանդին առողջից զատելը արդէն ուշ է լինում և ապարդիւն:

Վարակը աղբի մէջ ամբողջ տարի կարող է պահպանուել, ուստի աղբը պէտք է բնակավայրից և արօտատեղից հեռու տանելով, թաղել, իսկ գոմը (մսուրներն և այլ առարկաները) լուանալ եռացրած ջրով, կարբոլեան թթուի լուծուածքով սրբել և պատերը կրով սպիտակեցնել:

Նոր ձեռք բերած կովի միջոցով ամբողջ հօտը վարակելուց խուսափելու համար, պէտք է նրան մօտ երկու շաբաթ առանձին պահել և հետևել, թէ նա դաբաղով չի բռնուած արդեօք:

Ձիաների միջև դաբաղը նկատելի է իբրև եզական դէպքեր և համաճարակի կերպարանք չի րնդունում:

Դաբաղ ունեցող կենդանիներին բժշկելը արագացնում է նրա առողջանալը. հիւանդ կենդանուն կերի հետ տալիս են դարման, մաքուր ջուր՝ մի դոլլին երկու մաս քաղախաթթու խառնած, տաք ջրով թեփ (անասունների հեղուկային ուտելիք), եփած գետնախնձոր (կարտոֆել):

Բերանի խոռոչը ողողում են պղնձի կամ ցինկի արծասպի թույլ լուծուածքով (մի թէյաբաժակ ջրին կէս թէյազդալ պղինձ), կաղնու կեղևի թունդ լուծուածքով (երկու թէյազդալ կեղևը թէյի ձևով շինել՝ եռացրած ջրի մէջ զցելով և յետոյ արդէն մէջը կէս թէյազդալ պաղլեղ (շիբ) ածել:

Բերանակեղի (աֆտի) ժամանակ պէտք է թունդ քաղախի և պղնձի խառնուրդ քսել ցաւոտ

սմբակներին. պէտք է ձիւթաջուր (դեօգտեարնայա վօդա) քսել, կուրծք լիակատար մաքրութեան մէ պահել (եռացրած ջրով են լուանում), պտուկները իւղով (բէլէօննօյէ մասլօ) են թրջում, կաթը կթում և դէն ածում առանց զործածելու:

Թ.

Նշուած բոլոր անասունների ժանտախտը միայն որոճողներին՝ այծերի, ոչխարների և ուղտերի միջին է պատահում. մարդկանց վրայ չի փոխանցւում:

Այդ հիւանդութիւնը վերին աստիճանի վարակիչ է, անչիշատակելի ժամանակներից սկսած սոսկալի կոտորածներ է կատարում հօտերի մէջ և համեմատաբար մօտ ժամանակներս՝ երբ ժանտախտով վարակուած կենդանիների ստիպողական սպանման և երկաթուղով փոխադրութեան վերաբերեալ կանոններ հաստատուեցին, Ռուսաստանի սահմաններում ժանտախտը սկսեց նուազել:

Նախկին ժամանակներում (ներկայումս էլ մեզանում ամենուրեք երկաթուղի չկայ) ժանտախտը տարածւում էր հօտախմբերի միջոցով, որոնք քշում էին հօտավաճառները հարաւային և արևելեան երկրներից դէպի մայրաքաղաքներն ու մեծ քաղաքները:

Հօտախմբերը կազմւում էին առանձին եզներից, որոնք գնւում էին կերի վատ բերք ունեցող գիւղերից, հօտերը աւելի ու աւելի մեծ հօտախմբեր

էին կազմում, երբեմն մի քանի հազար զուլս. նրանց ամառը քշում էին արածելու, իսկ ձմեռը վատ սնունդ էին ստանում, յաճախ ցրտի ազդեցութեան էին ենթարկւում, լղարում, ուստի և հակումն էին ունենում դէպի ամեն տեսակ վարակիչ հիւանդութիւններ:

Նօտախմբերը քշում էին բնակավայրերի մօտով, սովորական ճանապարհներով, որով և վարակում էին տեղական տաւարը կամ վերջինից իրանք էին վարակւում:

Վարակուած կենդանիներին ճանապարհին այլևայլ տեղերում վաճառելով, հօտատէրերը հիւանդութիւններ էին սփռում զանազան բնակավայրերում:

Վարակը ընկնում էր նաև ժանտախտով բրուտուած տաւարի անցկացած արօտավայրում, որտեղ աղբ էր մնում. իսկ շներն ու թռչունները դէս ու դէն էին ցրում լէշերը:

Ժանտախտի վարակը հիւանդ կենդանու ամողջ մարմնի մէջ է տարածւում, մանաւանդ հեղուկ միջավայրերում (արիւն, լորձունք, կաթ, մէզ և այլն), զտնւում է նաև արտաշնչած օդի մէջ և կպչում է բոլոր այն առարկաներին, որոնց հետ շփումն է ունենում ժանտախտոտ կենդանին, մինչև իսկ մարդկանց, որոնցից էլ փոխանցւում է ամողջ կենդանիներին:

Կենդանուն, կեանքի ամբողջ ընթացքում, մի անգամ է միայն ժանտախտ կպչում, որից յետոյ

նա այլևս անխոցելի է դառնում ժանտախտի նկատմամբ:

Չերքէզական (տափաստանի) և կիրգիզական տաւարը աւելի է դիժանում ժանտախտին, քան տեղականը և առողջանում է 50%օ. այն ինչ տեղականը միայն 10%օ:

Հիւանդութեան ծածուկ շրջանը սովորաբար 4—9 օր է տևում (երկու օրից սկսած մինչև երեք շաբաթ), յետոյ կենդանուն դող է բռնում, սարսուռ և տաքութիւն է գալիս վրան, մարմնի տաքութեան աստիճանը բարձրանում է, կննդանին դառնում է յույլ (ալարկոտ) և սակաւակեր, շատ է խմում, դադարում է որոճալուց (ծասքելուց). կովի կաթը նուազում է: Կոպերի և քթի լորձաթաղանթը կարմրում և ուռչում, աչքերի ներսի անկիւնները թարախոտում են, քթից հոսում է, առատ լորձունք և արտասուք է արտաթորում, շրթութիւնների, լնդերքի, լեզուակապի և հեշտոցի (կովերի) վրայ փառ է կապում և կարմիր կէտեր են դուրս գալիս. հեղուկ, ջրանման, յաճախ արիւնախառն արտաթորութիւններ է ունենում և չոր, ընդհատ հազ:

Կննդանին չափազանց լղարում է, ման գալիս օրօրւում է, պառկելիս հողոց է հանում. հիւանդութիւնը վերջանում է կենդանու մահով, որը տեղի է ունենում մահամերձ կենդանու ցնցումներով (չղածգութեամբ): Ժանտախտի դէմ վատահելի միջոց գոյութիւն չունի, ուստի չարժէ. ասնձին կենդանուն արժէք տալ և բժշկել:

Հիւանդացած կենդանիներին պէտք է իսկոյն ևևթ առողջներից զատել, ըստ հնարաւորութեան շուտով սպանել և երեք արշին խորութեամբ թաղել, իսկ բանողների զգեստն ու ոտնամանները զոլորշուտալ, ախտահանել:

Նետևելով տաւարի սպանութեան որոշ պայմաններին, կառավարութիւնը վճարում է առարկաների (թի, սալ) արժէքը:

Եթէ հիւանդութիւնը արդէն զարգացել է և շատերն են հիւանդացել, քարանտին են սահմանում, այսինքն՝ հիւանդ կենդանիներին մի տեղ են հաւաքում, իսկ նրանց հետ միասին գտնուածներին (կասկածելի առողջներին) մի այլ տեղ են փոխադրում. զիւղի շուրջը պահակ են դնում և երթևեկութեան վրայ հսկում:

Այստեղ ամենակարևորը, ինչպէս և այլ վարակիչ հիւանդութիւնների դէպքում, առողջ կենդանիներին հիւանդներից զատելը և հիւանդութեան մասին անասնաբոյժին ու ոստիկանութեան իմաց տալն է:

ժ.

Սիբիրախտը պատահում է բոլոր կենդանիների և մարդկանց միջին, ամենից յաճախ ճահիճային տեղերում, ամառը, շոգերի ժամանակ:

Հիւանդութիւնը առաջանում է սիբիրախտի բարակ փայտիկներից (անտրակտի բացիլ), որոնք

մարմնի մէջ ընկնելով, արագութեամբ բազմանում են:

Այդ փայտիկները կարող են ապրել և զարգանալ նաև մարմնից դուրս՝ զետնի, աղբի, բոյսերի և ջրի մէջ:

Վարակիչ էակը շատ դիմացկուն է և դիւրութեամբ փոխանցւում, գտնւում է կենդանու ամբողջ մարմնի, արեան և բոլոր արտաթորութիւնների մէջ, հետևապէս և բոլոր այն առարկաների վրայ, որոնց հետ հիւանդ կենդանին շփումն է ունենում:

Վարակիչ էակը չորանալուց յետոյ իր թոյնի ոյժը (վիրուլենտութիւնը) չի կորցնում և կարող է կաշւի, բրդի, մազի, խոտի, դարմանի և այլ առարկաների հետ մի տեղից միւսը փոխանցուել:

Վարակը տարածում են նաև հանճերը, շները, գաղանները:

Ծածուկ շրջանը մէկից մինչև եօթն օր է տևում, յետոյ յանկարծօրէն նկատելի է լինում՝ դող, փրփրախառն արիւնի արտածումն բերանից, քթից և յետոյբից, երբեմն էլ շղաճութիւններ, որոնք վերջանում են կենդանու մահուամբ:

Պատահում է, որ հիւանդութիւնը աւելի երկար է տևում, երբեմն մի քանի (3—7) օր, մարմնի զանազան մասերում արագ աճող ուռուցքներ են զոյանում, որոնք երբեմն խոշոր չափերի են հասնում, մանաւանդ պարանոցի, փորի և ոտների վրայ. հիւանդութեան այս ձևը ստացող կենդանիների մի մասը, երբեմն նոյնիսկ 50% առողջանում է:

Ընկած կենդանուն թաղում են ամենաքիչը երեք արշին խորութեամբ, իսկ աւելի լաւ է այրել կաշու հետ միասին, նախապէս մանր կտրատելով և նաւթոտելով, որպէսզի ուրիշները չգործածեն:

Դարձեալ նոյն ախտահանութիւնը՝ սուլեմա, կարբոլ, կիր. առողջներին հիւանդներէց զատել, աղբը այրել և այլն:

Եթէ հիւանդացած կենդանուն բժշկել կարելի է, խիստ տենդի դէպքում վրան սառը ջուր են թափում, իսկ մարսողութեան խանգարման դէպքում կէս Փունտ զլաուբերեան կամ անգլիական աղից լծողական են տալիս. մէկ երկու ժամից կարելի է կարբոլեան թթուի երկու տոկոսանոց լուծուածք խմացնել՝ օրական երկու-երեք շիշ. ուռուցքները շփել անուշատրի (նաշատիրնիչ) սպիրտով, վրան սառուց դնել:

Կենդանիների սիբիրախտից առաջացած կորուստի առաջն առնելու կամ վերջինս թուլացնելու համար պրոֆ. Պաստերի առաջարկած ձևով պատուաստում են (ինչպէս ծաղկի դէպքում):

Անասնաբույժների մօտ միշտ կարելի է գտնել այդ վակցինները (պատուաստը). ներսրսկում են ամառը և աշնանը ձիաներին, ոչխարներին, խոյերին և առհասարակ եղջիւրաւոր անասուններին:

Պատուաստումից ընկնողների թիւը մի տոկոսից չի անցնում սովորաբար:

ԺԱ.

Տուբերկուլեօզը կամ բարակացաւր (մարգարտի հիւանդութիւն) զոյութիւն ունի բոլոր երկրներում և եղջիւրաւոր կենդանիների բոլոր տեսակների մէջ, խոզերի, այծերի, ոչխարների, շների, կատունների և թռչունների մէջ:

Դա ամենայաճախագէպ հիւանդութիւններից մէկն է. կովերի 20% աւելին բարակացաւր ունի. մինչև իսկ տափաստանի (ստեպ) տաւարի 8—9% բարակացաւր ունի:

Հիւանդութիւն առաջացնողները Կոխի 1882 թ. յայտնագործած բարակացաւրի փայտիկներն են:

Այդ հիւանդութիւնը վարակիչ է և փոխանցւում է չորացած մաղաս (բղամ) պարունակող փոշու, նոյնպէս և կերի, կաթի միջոցով:

Ջրի ընդհանուր տաշտակները, դոյլերը և այլ ամանները նպաստում են վարակման:

Հիւանդ կենդանիների հիւանդութեան չատուկ փոփոխութիւններ պարունակող օրգանները (թոքերը, լեարդը և այլն) նոյնպէս վարակիչ են:

Հիւանդութեան արտաքին նշանները սակաւ անգամ են նկատելի. կովը երբեմն լղարած է լինում, հագում է, երբեմն փորլուծութիւն է ունենում, երբեմն ուռչում է նրա կուրծք կամ աւշեայ գեղձիկները, իսկ կաթի մէջ մանրացուցի տակ Կոխի փայտիկներ կարելի է գտնել:

Բարակացաւր խրոնիքական հիւանդութիւն է, տարիներ է տևում, բժշկելու միջոցներ զոյութիւն



չունեն. հիւանդութեան առանձին արտայայտու-  
թիւններն են միայն բժշկուում:

Հիւանդութիւնը ճանաչելու համար կենդանու  
մարմնի մէջ Կոխի յայանագործած տուբերկուլինն  
են ներսրսկուում, որից չետոյ հիւանդ կովի տաքու-  
թիւնը 1<sup>1</sup>/<sub>2</sub>—2 աստիճան բարձրանում է, իսկ ա-  
ռողջների մէջ ներսրսկուումը նկատելի փոփոխու-  
թիւններ չի առաջացնում:

Բարակացաւը ոչնչացնելու նպատակով հիւանդ  
կենդանիներին սպանում են՝ արժէքը անասնատի-  
բոջը վճարելով, իսկ հիւանդի հետ միասին զտրն-  
ւած կենդանիներին հեռացնում են. շէնքը ախտա-  
հանում են, ինչպէս և բոլոր նման դէպքերում. դա  
ամենայն սրբութեամբ պէտք է կատարել:

Նախ քան բժշկուած կենդանուն նորից ընդ-  
հանուր հօտը թողնելը, պէտք է որոշ հեռաւորու-  
թեամբ առանձին պահել և հսկել նրա առողջու-  
թեան վրայ:

**ԺԲ.**

Սապը չափազանց վարակիչ և անբուժելի մի  
հիւանդութիւն է, սովորական պայմաններում յա-  
տուկ է միակեղակ կենդանիներին (ծիւն, իշին) և  
նրանցից էլ փոխանցւում է մարդուն և ընտանի  
կենդանիներին, բացի եղջիւրաւոր անասունները:

Հիւանդութեան զրգիչը՝ սապի փայտիկը  
երևան է գալիս հիւանդ կենդանու բերանի խոռոչի  
արտաթորութիւնների և կաշուի խոցերի վրայ:

Հիւանդութիւնը երբեմն խրոնիքական է լի-  
նում և կենդանին երկար ժամանակ (երկու-երեք  
տարի) նրա տարածողն է դառնում. հիւանդու-  
թիւնը տարածւում է նաև ծիասարքի, կերի, խու-  
մի, տաշտակի, դոյլի և այլ առարկաների միջոցով:

Սապի վարակիչ թոչնը առաջին անգամ ամե-  
նից յաճախ շնչողական զործարանների (քիթ, թո-  
քեր) մէջն է մտնում. երկրորդ տեղը կաշին է  
բռնում:

«Քիթ» սապի դէպքում կենդանու մէկ (աւելի  
յաճախ) կամ երկու թթածակից զորշ-դեղին, եր-  
բեմն արիւնախառն շողիք (լորձունք) է հոսում.  
շողիքը աղտատու, մածուցիկ յատկութիւն ունի:

Քիթ լորձաթաղանթի վրայ նկատւում են  
բշտիկներ և խոցեր՝ անկանոն, հաստացած բոլորքով.  
երբեմն այդ խոցերը խորն են լինում և բռնում են  
քիթի միջնորմը նրա ամբողջ հաստութեամբ, ստործնօ-  
տեայ գեղձերը ուռչում, բշտիկաւոր և բարձր են  
դառնում, շարժականութիւնից զրկւում, սակայն  
անցաւ են դառնում. կենդանին հազում է, լղա-  
րում և շուտով յոգնում. հիւանդութեան ընթացքի  
մէջ երբեմն ընդմիջումներ են տեղի ունենում, լոր-  
ձահոսութիւնը նուազում է, առողջացած խոցերի  
տեղ սպիտակ, ամուր, ճառագայթածև կամ աստ-  
ղանման սպիներ են մնում:

Սապի համեմատաբար սակաւադէպ «կաշուի»  
տեսակը պատահելիս, սովորաբար ոտներն, ուսերը,  
կուրծքը, փորի ներքևի մասերն են բռնւում. կաշ-  
ւի տակ ընկոյզի մեծութեամբ բշտիկներ կամ զրն-

դիկներ են դուրս գալիս, որոնք փոխուում են վերևի մասերում դժուարաբուժիչ խոցերի՝ մածուցիկ, աղտատու, յաճախ արիւնախառն, չափազանց վարակիչ արտածութիւններով:

Այդ բշտիկների շուրջը ուռչում են աւշեայ անօթներն ու գեղձիկները թելերի, տէրողորմեայի նման:

Սապի տարածման դէմ հետևեալ միջոցներն են գործադրում. արգելում է ծախել, աշխատանքի և փոխադրութեան համար գործ ածել այն ձիաներին, որոնք քթի լորձահոսութիւն, ստործնօտեայ գեղձիկների ուռոցք ունեն և շօշափելիս մարմնի վրայ սառնութիւն է նկատուում. կաշու հետ միասին թաղում են դետնի մէջ կամ այրում. հիւանդութիւնը անբուժելի է, առողջների համար վտանգաւոր. որքան շուտ ոչնչացուի հիւանդը, այնքան լաւ. կրկին ախտահանութիւն, և բացի այդ ամենաքիչը տասն օր ախտուները պէտք է ծխի տալ, սպիտակացնել, նոյնիսկ յատակը նորոգել և այլն:

Հիւանդութիւնը ճշտութեամբ որոշելու համար անասնաբույժները յատուկ հեղուկով՝ մալնէինով ստորկաշուեայ ներսրսկումներ են կատարում կասկածելի կենդանիներին, որը սապով վարակուածի տաքութիւնը երկու և աւելի աստիճանով բարձրացնում է:

Ջրվախութեամբ հիւանդանում են նախապէս շները, աղուէսները, դալները, իսկ նրանցից էլ փոխանցում է այդ հիւանդութիւնը տնային կենդանիներին և մարդկանց:

Այդ հիւանդութիւնը մահացու է և չափից

դուրս վարակիչ. վարակը գտնուում է լորձուների մէջ և խածնելիս անցնում է հիւանդից առողջին:

Արիւնի մէջ մտնելով, վարակը ծաւալուում է ամբողջ մարմնով և ամենից առաջ նեարդային կենտրոնական համակարգութիւնն (զլխի և մէջքի ուղեղ) ու լորձաղեղձերն է բռնում:

Հիւանդութեան նշանները վարակումից անմիջապէս չետոյ չեն յայտնուում. ժածուկ շրջանը կարող է ինն օրից մինչև երեք ամիս և նոյնիսկ աւելի՝ մինչև մի տարի տևել:

Հիւանդացած կենդանին անհանգիստ, դիւրագրգիռ է դառնում, սակաւակեր. դժուարութեամբ է կլլում, երբեմն ցնցումներ (զղածգութիւններ) են տեղի ունենում, բառաչում է կամ խրխնչում, քացի է տալիս կամ պողպհարում, խաժնում է մսուրը և այլ առարկաները, որի շնորհիւ նրա ատամներն ու պոզերը կոտրատուում են:

Այդպիսի կենդանիները աշխատում են կապից ազատուել և փախչել, մէկին կծել. ձիաները իրանց ոտներն են կծում. բերանից առատօրէն լորձուք և փրփուր է հոսում:

Ուտելու և որոծալու ցանկութիւնը կորչում է, զղածգութիւնները ուժեղանում են, հեղուկ արտաթորութիւններ են տեղի ունենում և կենդանին չափազանց լղարում է:

Հիւանդութեան բռնկումները երբեմն ժամանակաւորապէս դադարում են, ապա աւելի մեծ ոյժով սկսում. վերջ ի վերջոյ մարմնի յետին մասը կաթուած է ստանում. կենդանին վեր կենալու

կարողութիւնից զուրկ լինելով, պառկում է և սոսկալի ջրածղութիւններով մեռնում, 4—7 օր հիւանդութիւն քաշելուց յետոյ:

Երբ շրվախութեամբ բռնուած կենդանին կծուած է մարդուն, վերջինս պէտք է ինքը ծծի վերքը՝ եթէ շրթունքներին և բերանին չանգուածք չունի, կծուած վերջաւորութիւնը (ոտը կամ ծեօրը) իսկոյն ևեթ պինդ կապի, վերքից որքան կարելի է շատ արիւն դուրս քամի և շիկացրած երկաթով՝ օրինակ զամով (մեխով), բանալիով կամ դոնէ պապիրոսով խորը աչրի:

Իսկ երբ անհնար է խածուած տեղը կապել կամ վերքը արտածծել, պէտք է արիւնառ պուլիկ (բանկա) դնել և ապա աչրել:

Յետոյ խածուածը պէտք է գնայ Պաստերեան կաշարաններից մէկը՝ թոյլ թոյնի պատուաստմամբ բժշկուելու համար:

Խածուած կենդանու վերքը լուսնում են կարբոնի թթուով, սուլեմայով և շիկացրած երկաթով աչրում:

Կենդանուն առանձնացնում են շոկ շէնքի մէջ և հիւանդութեան նշանները երևան դալու դէպքում սպանում են, նրանց լէշը թաղում են սովորական նախազոզութիւններով, իսկ առարկաները պատահանում կամ աչրում:

Իբրև նախազոզական միջոց անտուն և թափառիկ շների ու կատունների վրայ հսկողութիւն պէտք է նշանակել. շներին պէտք է կապած պա-

հել, առանց երախակալի չթողնել, իսկ թափառիկներին ոչնչացնել:

Քաղաքակիրթ երկրներում շներին հարկի ենթարկելը և այլ միջոցներ, որոնք ուղղուած են աւելորդ կենդանիների չափազանց տարածման առաջն առնելու դէմ, հետզհետէ կրճատում են ջրվախութեամբ վարակուելու դէպքերը:

ԺԳ.

Թորերի տարափոխիկ բորբոքումը միայն եղջիւրաւոր անասունների մէջ է պատահում, շատ երկար է տևում, մահացութեան տոկոսը հասնում է վաթսուների և աւելի, առողջացած կենդանիներն էլ թորերի խրոնիքական բորբոքումն են ունենում:

Այս հիւանդութիւնը շատ վարակիչ է, առանձնապէս հեշտութեամբ է դիպում վարակը կաթնտու մատղաշ կովերին. ծածուկ շրջանը 2—3 շաբաթից մինչև չորս ամիս է տևում:

Կովի կաթը նուազում է, ինքը հալում, շնչահեղձութիւն է ունենում, քթածակերը լայնանում են, սակաւակեր է դառնում, տաքութիւնը բարձրանում է մինչև 41—42 աստիճան, լլղարում է և վերջապէս ընկնում:

Եթէ կենդանին սկսում է առողջանալ, նրա տաքութիւնը նուազում է, ախորժակը բացւում, սակայն ինքը երկար ժամանակ չափից դուրս լլղարած է մնում և սակաւակաթ:

Հիւանդութեան տարածման դէմ գործադրուած են հետեւեալ միջոցները. հիւանդ կենդանուն սպանում են, նրան առողջից զատուած, վարակուած առարկաները յախտահանում և առողջների կերը բարելաւում:

Ակտինոմիկոզը բնորոշուած է նրանով, որ եղջիւրաւորների ծնօտուկի, լեզուի լորձաթաղանթի, շրթուկների տակ, զլխի կամ վզի, լեարդի և թոքերի վրայ թարախակալած ուռուցքներ են գոյանում:

Ուռուցքների մէջ թարախ է լինում, որտեղ և գտնուած է ճառագայթածե սպունդը՝ վարակը. վերջինս փոխանցուած է նաև մարդուն:

Սակաւ անգամ է բուժելի, ուստի և պէտք է կենդանուն սպանել և ախտահանել, ինչպէս լիշուած է վերևը:

Տարափոխիկ հիւանդութիւնների ընդհանուր տեսութիւնը վերջացնելով, ի միջի ալլոց պիտի ստենք, որ վատ հոգատարութիւնից էջերի և ծիաների մէջքին մի տեսակ վէրք է առաջանում, որը չարչարում է թէ՛ տէրերին և թէ՛ անասուններին: Առաջարկում ենք մի փորձուած միջոց. երկուերեք շարաթուալ ընթացքում առաւօտեան և երեկոյեան վէրքը լուանալ մաքուր, եռացրած ջրով և վրան ածել իսկական եօդոֆորմ՝ խառնած հաւասարա չափ ամենամաքուր նաֆտալինի հետ:



## ԵՐԿՈՒ ՆՕՍՔ

(Յաւելում)

### I.

Կարիք շատ ունենք, մեր ցաւերը բազմաթիւ են և անվերջ, բայց չպէտք է յուսահատուել. պէտք է մեր բոլոր ունեցած ոյժը կենտրոնացնենք այսպէս ասած գիւղական նոր, թարմ ինտելլիգենցիա ստեղծելու, որը ձգտէր իրականացնել վերոյիշեալ զրոյցները, որը կարողանար բարձրացնել մեր ուժասպառ գիւղը, մեր գոյութեան հիմքը. առանց առողջ գիւղացիութեան մենք բոլորս էլ կորած ենք: Եւ ճշմարիտ. որ մեզանում սաստիկ աղքատութիւն է տիրում, որ մենք տնտեսապէս բոլորովին ընկած ենք, որ հայկական գիւղը — մեր ազգի հիմքը ալլասերում է թէ՛ ազիտութիւնից, թէ՛ խեղճութիւնից և թէ՛ անկրթութիւնից, կուլտուրական ամենաէական պահանջների բացակայութիւնից՝ ո՛չ մի տարակոյս չի կարող լինել:

Ժողովուրդը քայքայուած է, բայց չկայ տարաբաղդաբար մէկը, որ իր ազնիւ սրտից և իր և սուրբ պարտականութիւն զար օգնելու այդ խեղճ, ճնշուած ժողովրդին:

Եւ ճշմարիտ, որ մի ազնիւ և հարուստ մարդ ներկայումս կարող էր անմահացնել իր անունը, որովհետեւ մեր ժողովուրդը փոքր ազգ է, և չնչին դահարերութիւններով էլ կարելի է նրան գոհացում տալ:

Հարկաւ, եթէ ինքը ժողովուրդը այնքան ինքնաձանաչ լինէր, որ կարողանար իր գլխի ճարը ինքը տեսնել, այդպիսի անձնաւորութիւնների կարիքը այնքան էլ զգալի չէր լինի, սակայն ինքնօգնութեան գաղափարը դեռ շատ հեռու է մեզանից, ուստի և անհրաժեշտ են անձնաւորութիւններ՝ բարի և հարուստ, որոնք նրան օգնել կարողանային:

Ժողովրդի բարեկեցութիւնը բարձրացնելու համար ներկայումս մեզ անհրաժեշտ են դանազան լուսաւորիչ հիմնարկութիւններ, որովհետեւ չքաւորութիւնը, տգիտութիւնը և հիւանդացումն մէկը միւսի հետ սերտ կերպով շաղկապուած են: Մեզ անհրաժեշտ են սպառողական ընկերութիւններ, մանր փոխաւորութիւն, շրջիկ հողագէտներ, շարժական բժշկական օգնութիւն, գիւղական փոքրիկ գրադարաններ, գիւղատնտեսական ուսումնարաններ և այլն և այլն:

Այս գաղափարները տարիներ առաջ միշտ կրկնուել են. և ներկայումս էլ կրկնուում են, խօսուում ու քարոզուում, բայց դրանք մնում են «ձայն բարբառոյ լանապատի». մենք տեսնում ենք, որ մեր գիւղերը մահասպառ են լինում և ժողովրդի խեղճութիւնը իր գազաթնակէտին է հասել, ուստի

անհրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն: Այս և անցեալ տարուայ սովը, որ հասարակութեան ուշադրութիւնը իր վրայ կենտրոնացրեց, տարեցտարի պիտի կրկնուի և աւելի սոսկալի չափեր ընդունի, աւելի սուր կերպարանք կրստանայ, քան ներկայումս:

Բացի վերոյիշեալ գործօններից (տգիտութիւն, չքաւորութիւն) մեծ դեր է խաղում տնտեսական կեանքի մէջ նաև սակաւհողութիւնը և հողագրկութիւնը նոյնպէս և զեմսուօյի բացակայութիւնը:

Ժողովուրդը չի կարող միշտ մուրացկանութեամբ և ողորմութեամբ ապրել. նա չի կարող տանել այդ արատը. հարկաւ մեր պարտականութիւնն է այդ ծանր բողոքներին օգնութեան գալ, սակայն այդ օգնութիւնը պէտք է լինի հիմնաւոր, լաւ հողի վրայ դրուած և մշտական, ո՛չ թէ ժամանակաւոր: Վերոյիշեալ միջոցները կեանքի մէջ իրականացնելու համար մարդիկ են պէտք, որոնք կապուած լինէին ժողովրդի հետ, որոնք ապրելիս և աշխատելիս լինէին ժողովրդի մէջ:

Իսկ մարդիկ ունենալու համար անպայման պէտք է հիմնել գիւղատնտեսական և տեխնիքական երկսեռ ուսուցչանոցներ՝ երեք-չորս տարուայ դասընթացքով, որոնք կարողանային թէ գործնականապէս և թէ տեսականապէս լաւ պատրաստուած ուսուցիչներ մատակարարել, իսկ վերջիններս ապագայում բացուելիք միդասեան և երկդասեան ուսումնարաններում իրանց իւրացրածը յօգուտ ժողովրդի գործադրել կարողանային:

Սուազարկում ենք չորս տարուայ դասընթացով մի գիւղատնտեսական երկսեռ ուսումնարան Վաղարշապատում, էջմիածնին կից, որտեղ այդ տեսակ ուսումնարանից կարող կրլինէին մեծ օգուտ ստանալ նաև ճեմարանի սաները. այդ ուսումնարանը ղեկավարող ուսուցիչները մեծ դեր կրխաղային նաև էջմիածնի կալուածներին կանոնաւոր հսկելու գործում և այդտեղի աշակերտները աւելի զարգացած կրլինէին ու աւելի սերտ կապուած էջմիածնի հետ:

Այդ ուսումնարաններում երեք տարուայ ընթացքում պիտի անցնել գիւղատնտեսական և տեխնիքական առարկաները գործնականապէս և տեսականապէս, իսկ վերջին տարին՝ մանկավարժութեան, առողջապահութեան և կօօպերացիայի հիմքերը: Այդպիսով դուրս կրգային անժնաւորութիւններ, որոնք սակաւ պահանջներով գիւղերում ապրելով, մատչելի կրլինէին ժողովրդին և մեծ օգուտ կարող էին տալ նրան:

Երկրորդ՝ տեխնիքական երկսեռ մի ուսումնարան պէտք է հիմնել հայաբնակ կենտրոնական մի զաւառում, ինչպէս օրինակ Ալեքսանդրոպոլում և կամ չքաւոր ու անտեսապէս ընկած հին Նախիջևանում. այդ ուսումնարանները պիտի ունենան երեք-չորս տարուայ դասընթաց և ուսուցիչներ պիտի մատակարարեն ապագայի մեր մէկ և երկու տարուայ դասընթացով տեխնիքական ուսումնարանների համար: Իսկ Երևանում, որտեղ ուռնին շատ առատ է, պէտք է հիմնել անայնագործութեան

գիշերօթիկ դպրոց գիւղացիների համար, որը կընստի տարեկան մօտ երկու հազար բուբլի, ինչպէս առաջարկում է տիկին Շելլովնիկեանը, \*) և ինքն էլ պատրաստ է ներկայումս անմիջապէս բաց անել այդ դպրոցը, եթէ ճարուէի այդ գումարը: Հարկաւ անայնագործական ուսումնարաններ անհրաժեշտ են նաև այլ տեղեր, ինչպէս Ախալցխայում. նոյնպէս աւելի օգտաւէտ կրլինի այդտեղ պարտիզպանական համավիճակային մի ուսումնարան ունենալ, զանազան բաժանմունքներով, ինչպէս՝ շերամաբուծական, մեղուաբուծական և այլն:

Այդպէս ուրեմն մեզ անհրաժեշտ է ունենալ առժամանակ երկու-երեք մասնագիտական և մի քանի անայնագործական ուսուցչանոցներ:

Եւ այդպիսով գիւղատնտես-վարժապետը տեխնիք-վարժապետի հետ ձեռք-ձեռքի տուած, իրրե ժողովրդի ազնիւ բարեկամներ, նրա բարեկեցութիւնը բարւոքել կրկարողանային:

Եւ երկրորդ՝ չենք կարող մոռացութեան տալ այն հանգամանքը, որ ներկայումս հիւանդացումն ու մահացութիւնը սաստիկ հարուած են տալիս մեր ժողովրդին և այլ կերպ չի էլ կարող լինել, որովհետև թերակերութիւնն ու սգիտութիւնը ուժասպառ հիւանդութիւններ են առաջացնում:

Մի քանի տեղ գոնէ (10—12) պէտք է հիմնել գիւղական փոքրիկ հիւանդանոցներ. երբ այդ հի-

\*) Տե՛ս «Ժայռ» № 50, 1906 թ.

մնարկութիւնները կրլինին, անկասկած բժիշկներ էլ  
Հանդէս կրգան:

Այդ տեսակ զիւղական եօթ-ութ մահնակա-  
լանոց հիւանդանոցը կարելի է կառուցանել մօտ  
ութ հազար բուբլով, իսկ բժշկի ու մանկաբար-  
ձուհու ռօճիկը կարող են վճարել եօթ-ութ զիւղ  
միասին փոխադարձ երաշխաւորութեամբ:

Փորրիկ հիւանդանոցներ անհրաժեշտ են, որով-  
հետեւ այդպիսով մենք ինտելլիգենտ ոյժ կուեննանք  
զիւղում. բժիշկը, բացի զուտ բժշկական-բուժա-  
կան գործունէութիւնից, վարժապետի և քահա-  
նայի հետ միասին կուլտուրական ոյժ կրկազմէ:

Ներկայումս սուր կարիք է տիրում. ան-  
հրաժեշտ է շուտափոյթ օգնութիւն, որը մենք  
պարտական ենք. և ամենահիմնաւոր օգնութիւնը  
վարկատու մի ընկերութիւնը միայն ընդունակ կը-  
լինէր հասցնել: Ժամանակ է արդէն, որ մեր հա-  
րուստներից զոնէ մէկն ու մէկը, վերջապէս ըմբռ-  
նելով այդ, իր կարողութեան գէթ չնչին մասը  
գնէր այդ վեհ գործին:

Մօտ յիսուն հազարի զուժարով հնարաւոր  
կրլինէր հիմնել վարկատու մի հաստատութիւն,  
որից կարողանար օգուտ քաղել կարիքաւոր, խեղճ  
ու թշուառ զիւղացիութիւնը:

Այդպիսի մի արդիւնաւէտ հիմնարկութիւն  
կարող կրլինէր լայն և ընդարձակ ճիւղաւորութիւն  
ստանալ: Աղքատին, դժբախտին և յանցաւորին պէտք  
է օգնել մինչև հրանց անկումը. դրանից յետոյ օգնու-  
թիւնը ապարդիւն կրլինի:

Ահա՛ մի մեծ գործ, սրբազան պարտականու-  
թիւն ամէն մի ազնիւ և հարուստ մարդու համար:

Երբէք չպէտք է մոռանալ, որ միւս միջոցնե-  
րը, այն է՝ կօօպերատիւր, մանր փոխառութիւնը,  
և այլն կարող են զուգընթացաբար մեծ դեր կա-  
տարել ներկայումս էլ: Պէտք է միայն ինքնաճա-  
նաչութիւն, թէ «մէկը բոլորի, բոլորը մէկի հա-  
մար» է:

Այդ տեսակ գործերը մարդիկ պիտի կատա-  
րեն առհասարակ ո՛չ թէ կտակի միջոցով, այլ ան-  
ժամբ իրանց կենդանութեան ժամանակ. հարկաւ,  
եթէ գտնուի այդպիսի մի ազնիւ բարերար, նրան  
մարմարէ մահարձանը քիչ կրլինի. որքան բարույա-  
կան վարձատրութիւն. մարդկային ճիշտ պարտա-  
կանութեան որպիսի ըմբռնումն:

## II.

Ահաւասիկ օրինակելի բարեգործութեան մի  
ձև, որին իրօք պէտք է հետեւել. և բաղդաւոր է  
այն երկիրը, որը այնպիսի զիտակից քաղաքացիներ  
ունի, ինչպէս Մովսէս Լորիան, որը զոնէ իր մահ-  
ւանից առաջ քաւեց իր մեղքերը: Դա սոցիալ-  
բարեգործական մի ընկերութիւն է, որը իր նմանը  
չունի աշխարհում — ինչպէս պ. Տոտոմեանցն է ա-  
սում իր հրաշալի գրքում \*): Նա շատ բան է արել:

\*) Сельско-хозяйственные кооперации. (Очерки  
съ приложениемъ уставовъ). Изданіе Семенова,  
1908 года. Համառօտ թարգմանում է արդէն հայերէն:

ոչ միայն բանւորների, այլև գիւղացիների համար: Այդ ընկերութիւնը իր գործունէութիւնը սկսեց 1902 թուականից և կոչոււմ է «Հումմանիտարիա»՝ ի նշան այն ծառայութիւնների, որ մատուցանում է մարդկութեան:

Եթէ կարելի է առհասարակ բարեգործութեան մեծ նշանակութիւն տալ, դրա այն մէկն է միայն գերադասելի, որպիսին Միլանի ընկերութիւնն է, որը իր գործառնութիւնը տարածել է ամբողջ հիւսիսային Իտալիայում:

«Հումմանիտարիա» ընկերութեան հիմքը դրւել է նախկին առևտրական Լորիայի նուիրարեւոյն տաան միլիոն Ֆրանկի (երեք և կէս միլիոն բոլրի) շնորհիւ:

Լորիան ծագում է Վենետիկի վիենակի մի աղքատ հրէայ ընտանիքից և իր կարողութիւնը մեռք է բերում արդէն չափահաս ժամանակ, զլիսաւորապէս եզիպտոսում, որտեղ եզիպտական փոխարքայի մատակարարը դարձաւ. նա չէր խորշում ոչ մի միջոցից կապիտալ ձեռք բերելու համար. ասում են թէ նոյնիսկ գերեզմանութեամբ էլ էր պարապում:

Ինքը Լորիան, հանգստանալու համար կնոջ հետ եզիպտոսից Միլան վերադառնալով, չէր սիրում իր անցեալի մասին պատմել. և ոչ ոքի հետ առհասարակ բարեկամութիւն չէր կապում:

Միլանում նա միայն մէկի հետ սերտ բարեկամութիւն հաստատեց, որին և երբեմն այցելում էր. կնոջ մահից յետոյ ապրում էր միմիայն իր

սպասաւորի հետ, թէև մի քանի եղբայրներ և ուրիշ մերձաւորներ ունէր. ազգականներին նա չէր սիրում, սպասաւորի վերաբերմամբ ժլատ էր, մինչև իսկ մասնաւոր համբորդութիւնների ժամանակ, սակայն իր վրայ էլ շատ չէր ծախսում:

Իր կեանքի վախճանի մօտ Լորիան գաղափար չղացաւ մեծ դրամազուլիս կազմել, որով հնարաւոր լինի ի նպաստ աղքատների մի հսկայական հիմնարկութիւն հաստատել և այդ գաղափարը նրան չափազանց ժլատ դարձրեց:

Իրա հետ միաժամանակ նա մտածում էր, թէ ի՞նչպիսի հաստատութիւն հիմնի, որ բոլորին ևս օգտակար լինի. նա, իբրև անզարգացած անձնաւորութիւն, կարծում էր, թէ հասարակ բարեգործութեամբ կարելի է չքաւորութիւնը, շրջմոլիկութիւնը և գործազրկութիւնը վերացնել:

Չիմանալով, թէ ի՞նչ մեռնարկի և ինչի՞ վրայ կանգ առնի, նա ամենուրեք դիտում էր բարեգործական հիմնարկութիւնները և յափշտակութեան առաջին բուսիներին Տուրինում այդ հիմնարկութիւններից մէկին նույնիսկ խոստացաւ իր դրամազուլիսը:

Կարելի է երևակայել նրա զարմանքը, երբ նա, լայն ծրագրներով համակուած և որոշ ինքնավստահութեամբ լցուած, մերժում է ստանում Միլանի քաղաքային վարչութիւնից՝ վերջինիս նուիրած իր հարիւր հազար ֆրանկը ընդունելու նկատմամբ, որովհետև Լորիան մի քանի անընդունելի պայմաններ էր դնում:



Նա պատեց ամբողջ Եւրոպան, սակայն չգտաւ այնպիսի մի բարեգործական Հիմնարկութիւն, որի օրինակով կարելի լինէր Միլանում ևս մէկը Հիմնել. տարակուսանքներով տանջուած, նա դիմեց իր միակ բարեկամին խորհրդակցելու. վերջինը համոզեց նրան համակրելի սոցիալիստ Նիուկկի-Վիանուն դիմելու, որին կարելի էր լիովին հաւատաւոր ընծայել:

Պէտք է ասենք, որ նուիրատուութիւնը ընդունելու դէմ ձայն աւողներինց մէկն էլ այդ վերին աստիճանի ինտելիգենտ անձը՝ Նիուկկի-Վիանին էր, որին վիճակուած էր Լորիայի հետ միասին մասնակցել հումանիտարիա-ի ծրագիրը կազմելու գործում:

Լորիան Նիուկկի-Վիանուն իր մօտ հրաւիրեց և աշխատանքի տան ու գործ գտնելու բիւրօյի ծրագիրը գծեց, կապիտալիստի միտքը դրանից դէմ չաճցաւ. նա կարծում էր, թէ այդօրինակ միջոցներով հնարաւոր կրլինի աղքատութիւնը ոչընչացնել:

Նիուկկի-Վիանին մեծ ջանքերով համոզեց Լորիային, որ այդ ծրագրին աւելացնէ մի կէտ ևս՝ կօօպերատիւ ընկերութիւններին և արհեստագիտական երկսեռ դպրոցներին նպաստելու մասին:

Լորիան շուտով վախճանուեց, իր ամբողջ կարողութիւնը (3½ միլիոն բուրլի) կտակելով «հումանիտարիա» ընկերութիւնը Հիմնելու, սակայն 1898 թուականին Միլանում զինուած ապստամբութիւն է բռնկուած և այդ ընկերութիւնը փակ-

ւում է. 1902 թուականին միայն ի վիճակի էր այդ ընկերութիւնը աշխատաւորների նիւթական և բարոյական դրութեան բարձրանալուն գործնակաւ նպէս նպաստել:

Նա չբաւականացաւ նախկին նեղ շրջանակով և աւելի ևս լայնացրեց իր գործունէութեան սպարէզը:

Նա ոչ միայն բանւորների և սպասաւորների համար աշխատանք գտնելու բիւրօ Հիմնեց, ոչ միայն կարուձևի, տնտեսագիտութեան, գծագրութեան և այլ տեսակի դպրոցներ Հիմնեց, այլև բանւորական տներ շինեց և շարաբրութեան մէջ մտաւ աշխատանքի բորսայի հետ, վերջինիս նշանակած նպաստների վրայ որոշ գումարներ աւելացնելով. և ուրիշ շատ գործեր այդ ոգւով:

Յատկապէս զիւղացիների համար հիւսիսային Իտալիայի գիւղերում հումանիտարիայի գիւղատնտեսական բաժանմունքի գործունէութիւնը սկսուեց 1905 թուականին:

Այդ գործունէութիւնը երևան եկաւ հետեւեալ շրջաններում. զիւղատնտեսական կրթութիւն, կօօպերացիա, զիւղատնտեսական կօօպերացիաներ, աշխատանք ճարել:

Գիւղատնտեսական կրթութեան, նոյնպէս և նրա հետ շաղկապուած ընդհանուր կրթութեան նպաստելու նպատակով հումանիտարիան ամեն տարի օժանդակում է չափահաս անգրագէտ զիւղացիների հողագործական տարրական շրջիկ դպրոցներին:

Կանանց գիւղատնտեսական կրթութիւնն ևս անուշադիր չէ մնում. Նիզվարդի կանանց գիւղատնտեսական գործնական դպրոցին հասարակութիւնը շատ եռանդուն աշակցութիւն է ցոյց տալիս. նպաստում է նաև յատկապէս գիւղերի ժողովրդական գրադարանների միութեան:

Բացի այդ, այդ ընկերութիւնը օգնում է նաև Միլանի դաւառի դպրոցներին, որոնք հիմնուած են գիւղացիներին տնայնագործութեան նոր ճիւղերը ուսուցանելու և հները կատարելագործելու համար:

Գիւղատնտեսական կօօպերացիաներին նպաստելը հումանիտարիայի գիւղատնտեսական բաժանմունքի զխաւոր նպատակն է հանդիսանում. ուստի և նա հիմնեց «Լոմբարդիայի սպառողական ընկերութիւնների միութիւն» անունով գիւղացիական ընկերութիւնը, որին և օգնում է ապրանքի պահեստներ հաստատելով, որտեղից ապրանք են վերցնում առանձին ընկերութիւնները պահում է հաշուապահ-հրահանգիչներ (ինստրուկտոր):

Այնուհետև բաժան կօօպերացիաներից նա կազմեց «Արտելների և ընկերութիւնների դաւառական դաշնակցութիւնը» և հողի կոլեկտիւ (հաւաքական) կապալառութեան և մշակութեան ընկերութիւններին նպաստներ է տալիս:

Ամենից առաջ օգնութիւնը արտայայտուած է «Կօօպերացիաներին փոխառութիւն հասցնելու ինստիտուտի» միջոցով տրուած նպաստներով:

Գիւղատնտեսական բաժանմունքը առանձնա-

պէս մեծ աշակցութիւն ցոյց տուեց վերջին երկու տարին Կալվենցանոյի հաւաքական կապալառութեան ընկերութեան, որը դրա շնորհիւ հիմնեց կաթնատուն և կոնսերվի գործարան՝ հանդերձ բոլոր կատարելագործութիւններով:

Գիւղատնտեսական բաժանմունքը բացի երկրագործական գործիքներ գնելու գործը թեթևացնելուց, նպաստում է վերջապէս կօօպերատիւ կաթնատներին, օժանդակում է տաւարի ապահովագրութեան ընկերութիւններին, մետաքսի կոկոններ արդիւնագործող և սպառող գիւղատնտեսական ընկերութեան, Ֆիլոկսերիայից վնասուած ալգինների վերամշակման, տնայնագործների արդիւնագործական ընկերութիւններին և այլն:

Իտալիայում տնայնագործութեամբ պարապում է գիւղական բնակչութիւնը, բայց սովորաբար անայնագործները ծանր պայմաններում են աշխատում և զնոգների ու միջնորդների շահագործման են ենթարկուած. այդ հանգամանքը նրանց մէջ զամբիւղ (կողով) վաճառող կօօպերաթիւ ընկերութիւն կազմակերպելու միտք յղացրեց և այդ ընկերութիւնը յարապէս ծաղկում է:

Գիւղատնտեսական բաժանմունքը, բացի ֆինանսական օգնութիւնը, ինքն էլ է հաստատում տնայնագործների արդիւնագործական ընկերութիւններ:

Այսպէս օրինակ Կոլոմբանօյում և Կոտոնիօյում (Միլանի դաւառ) նա կազմակերպել է կողովագործներին, որոնք հաւաքական ձեռով են գնում իրանց անհրաժեշտ նիւթերը, իրանց աշխատանքի

արդիւնքը հաւաքական ձևով վաճառում և իրանց սեփական հիւանդանոցն ու մեծ գործարանը ունեն:

Այդ կազմակերպութիւնը վերջ է դնում տնային առանձին աշխատանքին և մանր տնայնագործութիւնը դառնում է խոշոր, կօօպերատիւ:

Այնուհետև աշակցում է Միլանի դաւառում աթոռ, Ժանեակ (Վրուփեօ), ատամնավործին, կղպակ և նման իրեր արդիւնագործողներին կազմակերպելու գործում:

Նեաւելլով կտակողի՝ Լորիայի Միլանում աշխատանքի տուն բանալու ցանկութեան, չուսմանիտարիան արդէն 50 դեռատին հոդ է գնել զիւղատնտեսական գաղութ հիմնելու համար, որտեղ քաղաքի գործազուրկները մաքուր օդի մէջ իրանց համար աշխատանք գտնել կը կարողանան:

Ի լրացումն պիտի ասենք, որ բացի զործնականը, չուսմանիտարիան պարապում է նաև տեսական գործունէութեամբ, ի միջի այլոց հրատարակում է գիտական այնպիսի գրուածքներ, որոնք շատ օգտակար լինելով հանդերձ, սակաւ սպառուելով, հրատարակչական տեսակէտից անձեռնատու են:

Բացի այդ, գիւղացիների մէջ կօօպերացիայի պրոպագանդ մղելու համար մի երկշաբաթաթերթ է հրատարակում:

Այս բոլորից պարզ է, որ չուսմանիտարիայի բարեգործութիւնը նման չէ եկեղեցական-կրօնական նախկին բարեգործութեան, այլ նոր տեսակի է, որ կարիքի առաջն է առնում և, աշխատաւորների

վերահսկողութեան ներքոյ, մշտական հիմնարկութիւններ է հաստատում:

Իսկ այդ վերահսկողութիւնը պատշաճ կերպով իրականացնելու համար ընկերութեան բոլոր պաշտօնները ընտրովի են դարձած, և տարեկան չիսուն կողէկ միայն վնարելով, իւրաքանչիւր անձնաւորութիւն կարող է այդ ընկերութեան անդամ դառնալ և ընտրութիւններին մասնակցել:

Վարչութեան անդամները ընտրուած են գիտակ անձնաւորութիւններից, առաւելապէս տնտեսագէտ գրողներից, որոնց աւելացնում են նաև քաղաքային վարչութեան ամենաօրինակելի և հասարակութեան լաւածանօթ անդամներից:

Չուսմանիտարիայի ընտրութիւնները տեղի ունենալիս (երկու տարին մի անգամ) Միլանը կենդանութիւն է ստանում ո՛չ պակաս, քան քաղաքային ինքնավարութեան, միչև իսկ պարլամենտական ընտրութիւններին:

Ահա սուրբ գործ. և վեջացնենք այս տողերը մեծն Էնգելսի խօսքերով. մանր գիւղացիների նկատմամբ (ինչպէս մեզանում) մեր նպատակն է նրանց մասնաւոր արդիւնագործութիւնը և մասնաւոր սեփականութիւնը ընկերական դարձնել:

Նեաւելլի այդ բոլորին...

Աւելի ցանկալի է ունենալ քանակով քիչ սակայն հաստատ հիմքերի վրայ դրած և կենսունակ ընկերութիւններ, քան բազմաքանակ և կենսազուրկ:

Բաղբի Կուլտուրական Միութիւնը արդէն

որոշ կենսունակութիւն է ցոյց տալիս. միայն երեւում է, որ նրա քայլերը չափազանց դանդաղեցնում է նիւթական կարողութեան բացակայութիւնը. ցանկալի էր, որ Հասարակութիւնը նրան լայն աշակցութիւն ցոյց տար, որով կ'ընդարձակուէր նրա գործունէութիւնը Հայութեան բազմատեսակ խաւերում: Ցանկալի է, որ Թիֆլիզի Հայոց Բարեգործական Ընկերութիւնն ևս կրկին վերընդունէր իր նախկին ծրագիրը և աւելի ևս լայնացնէր:

Ահա այդ ուղղութեամբ լայնացած և ընդարձակուած այդ երկու ընկերութիւնները իրանք արդէն իրանց մէջ կրթովնութեան հոլմանիտարիայի գրեթէ ամբողջ ծաւալը:

Գրքոչկս արդէն մամուլի տակ էր, երբ պատշաճաւոր իշխանութեան կողմից պաշտօնապէս հաստատուեց Թիֆլիզի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը իբրև «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւն» իր զաւառական ճիւղերով և ընդլայնած ծրագրով. ի սրտէ ուրախ ենք և շնորհաւորում ենք:

Ըստ նոր կանոնադրութեան ընկերութեան նպատակն է՝

1. Նպաստել լուսաւորութեան տարածման և օգնել մեր ժողովրդին նիւթականապէս:

2. Այդ նպատակով ընկերութիւնը՝

- ա) Պահպանում է ուսումնարանները, հիմնում է նորերը և նպաստում նրանց:
- բ) Տարածում է արհեստներ, օգնում է ու-

սանողներին, հրատարակում է լրագրներ, գրքեր, հիմնում է տպարաններ և այլն:

գ. Հիմնում է հիւանդանոցներ, ապաստարաններ, հասարակական ճաշարաններ, էժանագին բնակարաններ, աշխատանքի տներ և այլն:

դ. Օգնում է տառապեալներին ժողովրդական աղէտների ժամանակ, այն է՝ սովի, տարափոխիկ հիւանդութիւնների, հրդէհների և այլ դէպքերում:

ե) Օգնում է բարոյապէս և նիւթականապէս իր տեղական ճիւղերին և այլ հայկական ընկերութիւններին:

Այս կանոնադրութեան հիման վրայ օրինական ճանապարհով կարող ենք իրականացնել մի շարք կուլտուրական ձեռնարկներ, որոնք կրբուժեն մեր ժողովուրդը թէ՛ բարոյապէս և թէ՛ ֆիզիկապէս. թո՛ղ ամենուրեք ճիւղեր բացուին կուլտուրական այս մեծ գործին նպաստելու:

Ցանկանք, որ Բարեգործական Ընկերութեան զաւառական ճիւղերը այնքան եռանդ պարունակեն իրանց մէջ, որ կարողանան կարճ ժամանակում կատարել այն, ինչ որ «Բագուի Կուլտուրական Միութիւնը» կատարեց երկու տարուայ ընթացքում:

Անդամակցիւր այդ ընկերութեան, անպատճառ:

«Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան» ամենազլխաւոր հոգար թո՛ղ զիւղատնտեսական չորսամեայ առաջին ուսուցչանոցը լինի, որը

կրտար ընկերութեան գործնական կրթութեամբ զինուած ուսուցիչներ, որոնք մեր զիւղերում զօրեղ գործօն կրինէին ժողովրդի ինքնազիտակցութեան զարթնելու գործում:

Եւ այժմ պէտք է կրկնել արդէն մի անգամ իմ «Գործարան թէ երկրագործութիւն» զբքօյլի մէջ ասածս, թէ գլխաւորապէս զիտակից հողատիրութեամբ կարելի է բացատրել մի որևէ ազդի գոյութեան պահպանութիւնը պատմական աննպատտ պայմաններում:

Ի՞նչ է պատահում ազգերի հետ, երբ կորցնում են իրանց երկիրը. այն՝ ինչ որ պատահել է հրէաների հետ՝ տարագիր հողից կտրուած ու թափառական վիճակ: Վերջապէս կարիք է զգացւում հողը նորից ձեռք բերելու, բայց արդէն ուշ է լինում:

Այդ հողի համար է, որ ազգերը պաշտպանւում են արտաքին թշնամուց, նոյն այդ հողի համար պէտք է պաշտպանուել և ներքին թշնամուց՝ տնտեսական կռուի մէջ:

Այդ կռիւր չափազանց չամառ բնաւորութիւն ունի, և չաղթում է նա, ով լաւ է հասկանում իր ժամանակի պահանջները:



ԲԺ. Ա. ԲՈՒԿՈՒՂԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպաս.)	5	կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5	»
3. Ի՞նչ է սիֆիլիսը	5	»
4. Առողջապահական զրոյցներ	5	»
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը	5	»
6. Ի՞նչ է անառակութիւնը	5	»
7. Վնասարական ախտեր	5	»
8. Աշակերտի առողջապահութիւն.	2	»
9. Մեր նեարդերը	10	»
10. Սիֆիլիս (բարեփոխուած)	10	»
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10	»
12. Գեղձախտ (գոլտուխտ)	10	»
13. Ո՞վ է յանցաւորը	15	»
14. Կարիք և բարեգործութիւն.	15	»
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15	»
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	15	»
17. Մարմնամարդութիւն (25 պատկերով)	20	»
18. Առողջապահական նուէր նորատի կանանց	20	»
19. Կինը և տղամարդը	15	»
20. Վիրաբուժական հիւանդութիւն և օպերացիա	5	»
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը.	15	»
22. Երիտասարդութիւն և ծերութիւն.	15	»
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20	»
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)	20	»
25. Ստամոքսի կատարը	20	»
26. Քուն և երազ (մի պատկերով)	25	»
Մեծադիր պատկեր «Քուն և երազ» առանձին	10	»
27. Գործարան թէ երկրագործութիւն.	15	»
28. Սնապաշտութիւն ու կախարդութիւն	20	»
29. Մտերմական խորհրդ. պատանիներին (օնանիզմ)	20	»
30. Գոյութեան կռիւ	20	»
31. Ռուդըլֆ Վիրխով	25	»
32. Սէր և խանդ (մի պատկերով)	20	»
33. Անառակութիւն և պոռնկութիւն	20	»
34. Նուէր հայ զինւորին	20	»
35. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն):	20	»
36. Նուէր հայ դպրոցականին (Մեր օրերը)	10	»
37. Աւթամուսայ բանուորական օր (մի պատկ.)	10	»
38. Ժողովրդական առողջապահութիւն (հիւանդացում և մահացութիւն)	10	»
39. Երկու խօսք գիւղացուն	10	»

Պահեստը գտնուում է՝ Ս. Պետրբուրգ, «Պուշկին» գրադարան, Աշխուհով փող., տ. 4

«Ազգային գրադարան»



NL0278014

1992

Պուլկինեան Արատիկ  
Ս. Պետերբուրգ, Լեշտուկով, 4

Դինն է 10 կոպ.